Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

891,99
Լ-14

891.549-13
Լ-14

ՍԱՍՄԱՅ ԾՌԵՐ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՎԷՊ

Նոր-Բայազետի բարբառով

Դրի ատաւ
Ե. ԼԱԼԱՅԵԱՆ

ԱՐՏԱՏՊԱԾ
ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՀԱՆԴԻՍԻՑ

ԹԻՖԼԻՍ 1906
Տպարան „ՀԵՐՄԷՍ“ Մադաթեան փող. 5.
(151)

891.99 126-38
Հ-14
Հայագիտ. ֆոնդ
ՀՍՍ-3859 23/II-84

891.99
Լ-14
19 NOV 2011

ՍԱՍՄԱՅ ԾՌԵՐ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՎԷՊ

Նոր-Բայազէտի բարբառով

Գրի առաւ
Ե. ԼԱԼԱՅԵԱՆ

Հայ
(1925)
126
38

ԱՐՏԱՏՊԱԾ
ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՀԱՆԴԻՍԻՑ

ԹԻՖԼԻՍ
Էրեմեան Տպարան «ՀԱՐՄԷՍ» Ընկ. Մադաթեան փող. № 5
1906 *(151)*

30 APR 2013

33 784

Дозволено цензурою. Тифлисъ, 10 Апрѣля 1906 г.

ՍԱՍՄԱՅ ԾՌԵՐ

(Նոր-Բայազէտի ըաբքառով)

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Ներկայ ժողովրդական վէպը ես գրի առայ այս ամառ (1905 թ. մայիսին) Նոր-Բայազէտի Ղըշլաղ գիւղում: Պատմողն էր նոյն գիւղացի Առաքել Շակոյեան փաքսունամեայ ծերունին: Սա այս վէպը սովորել է իր հօրից եւ աւագ եղբօրից, որոնք գաղրել էին Ղըշլաղ 1828 թուին Հին Բայազէտի Բարաթաբ գիւղից, ուր վերաբնակել էր սրանց պապը Դիդամից: Առաքելը, իր ասելով, այս վէպը մի քանի անգամ լսել է նաեւ Նոր-Բայազէտի գաւառի Բաշքեանց գիւղի մշեցի Աղդալից, որ հոչակուած էր այս կողմերում որպէս լաւ հեքիաթ ասող: Քանի եւ հինգ տարուց աւելի է, ինչ նա վախճանուած է, սակայն հեքիաթասէր ժողովուրդը մեծ յարգանքով դեռ եւս յիշում է նրան: Առաքելը անգրագէտ է, փառ յիշողութեան տէր, աշխոյժ եւ կրակոտ: Նա պարապում է երկրագործութեամբ, եւ ձրմեռները, ազատ ժամերին, հեքիաթներ պատմում: Նախ սկսում է ցածր ձայնով, բայց յետոյ հետզհետէ բարձրացնելով՝ աւարտում է բղաւելով: Նրա ձայնը շատ հեռու է տարածում, մանաւանդ երբ նկարագրում է քաջարի հերոսների կռիւը: Այսպէս ուրեմն, Առաքելը, ժողովրդի

հեռ միասին, ուժի գաղափարը նկարագրելիս՝ դիմում է նաեւ ձայնի ուժեղութեան օժանդակութեան:

«Սասնայ Ծռերը» ինձ պատմեց նաեւ Բիւսանդը գիւղում կոյր եւ փոքր ինչ խուլ՝ ծերունի Գրիգոր Յարութիւնեանը, որ նոյնպէս անգրագէտ է: Եւ որովհետեւ սա այս վէպը սովորել էր Երեւանցի Նրգիանից Յակոբից, որ ամբողջ գաւառում մեծ հռչակ ունի որպէս նշանաւոր հեքիաթ ասող, ուստի եւ ես շատացայ վէպի բովանդակութիւնը միայն նշանակելով, որպեսզի յետոյ, երբ նրա վարպետից գրի առնեմ վէպը, կարողանամ սրա հետ համեմատել: Երեւնում ես տեսայ Նրգիանից Յակոբին, որը յիրաւի, մի պերճախօս, աշխոյժ անձնաւորութիւն է եւ շատ բան գիտէ: Միայն, դժբաղդաբար, գրագէտ է, բաւական գրքեր կարդացած եւ զգալի ու նոյն իսկ անհեղեղ կերպով իր հայեացքներն ու յուսաբանութիւնները մըցընում պատմած վէպի մէջ. լեզուն էլ գրականակախառն Ալաշկերտի բարբառն է, ուստի ե՛ւ ես չկամեցայ նրանից գրի առնել այս միւռնոյն վէպը, մանաւանդ որ նա էլ Բաշքենդցի նոյն Աղդալից է սովորել:

Թէ այս երեքի եւ թէ այլ հեքիաթ ասողների շնորհիւ «Սասնայ Ծռերի» վէպը Նոր-Բայազէտի գաւառի թէ՛ բայազէտցի եւ՛ ալաշկերտցի գիւղացիների մէջ բաւական տարածուած է:

Ժամանակով Պապ թագաւոր կար, էտու նստուած տեղը Կապուտակողն էր: Մսըը քաղաքն էլ մէկ կռապաշտ թագաւոր էր նստուած: Էդ կռապաշտ թագաւորը գլուխը վեկալում ա, գալըմ ա Կապուտակողը՝ մեր Պապ թագաւորի վրայ կռիւ: Պապ թագաւորի խետը կռիւ ա անըմ ա, Պապ թագաւորի զօրքը չարդում ա, եսիր ա տանում ա: Եսիր ա տանըմ, էն ինչոր մանդը էրեխէքն ա՝ լցում ա տլի մէջ, կոխրճում են, մանդը մխը լցում տլի մէջ, էրեխէքը տալըմ կոխրճել, սպանել ա տալըմ. էն ինչոր զարթըն (մեծ) ա՝ էն վախտը տախտակը չորս դեխից ծակում ա, չորս մարդու գլուխ կոխում են տախտակի մէջը, յինքը հլնում ա վրէն նստում ա, ետ նա էս խետ որ յինքը հլնում վրէն նստըմ ա, յուսերը ծակրտում ա, փչանում են: Էտենցով Խայ ազգին փչացրեց: Հելաւ առ ժամանակ քաշեց, հելաւ որ Պապ թագաւորին մէ հատ աղջիկ, յինքը Փիրզատ—խանըմ: Էդ աղջիկը տասերկու տարեկան հելաւ, էտի շատ խորոտատես էր, էտու ձէնը գնաց հնկաւ կռապաշտ թագաւորին: Կռապաշտ թագաւորը յիրան վազիրներին զանչեց (կանչեց) ասաւ, թէ Պապ թագաւորին մէկ խորոտատես աղջիկ կայ, էտու համար միտք արեր էմ որ ուզեմ իմ Փաշա՝ տղին: Տուեց՝ տուեց, թէ չտուեց՝ իր թաղթը մօտէն առնեմ Հայաստուն կտրեմ, էտունց ազգը փչացնեմ, էտունց ազգը զաթի էտով ա փչացեր: Հելաւ որ յիրան վաքիլն ու վազիրը յղրկեց Պապ թագաւորի կուշը, աղջիկն ուզելու, էտոնք Պապ թագաւորին ասին. «Քո աղջիկդ բեր

տուր կռապաշտ թագաւորի տղին»։ Պապ թագաւորը վեկալեց յիրան լալա վաքիլ վազիրին ասաւ, թէ ինչ էք ասում էք, իմ աղջիկը էս կռապաշտը ուզում ա, մկա մեր հայ ազգին լայեղ չէ, որ կռապաշտին հայ աղջիկ տանք։ Էտ բոլոր իշխընները ասին. թագաւոր, աղջիկը քոնն ա, կըտաս՝ դու գիդաս, չես տայ՝ դու գիդաս։ Էնտուց յետի, վեկալեց ասաւ, որ չտամ մի խեռ մեր Հայաստունը կը բրդայ, քոքը կը կորայ. հէլաւ աղջկանը ասաւ, էս հմմէնը քեզի կապուած են, որ դու կռապաշտին չառնես՝ իմ թախտը իմ ձեռնէն կռապաշտը կառնի։ Էնդուց դէն աղջիկը ասաւ, թէ ես իմ հայոց հաւատը չեմ կուրցնի. ես ոչ կառնեմ ոչ էլ։ Հէրն ասաւ. «Ցարի իմ վիզը զարկ. որ դու չառնես՝ մեր բանը փիս գընի». հընկաւ աղաչանք։ Էտուց յետը աղջիկը փոշմնաւ, ասաւ, որ տալըմ ես՝ տուր։ Էկաւ կռապաշտի վազիրին՝ ասաւ, թէ մէկ աղջիկ ա՝ ղուրբան հընի թագաւորին։ Ընտուց յետը հէլաւ էդ վազիրը թագաւորին ջուղաբ տարաւ։ Էդ աղջկանը մէ աղբեր կար անունը Թորոս էր, յինքը շատ հնարագէտ մարդ էր, էտի հէլաւ յիրա հօրը, թագաւոր, ասաւ, յարի թագաւորին մէ պայման դնենք, թէ մեր աղջիկը պատիկ ա, խընդրում ենք մէ տասվերկու տարի ժամանակ տաս, որ մեր աղջիկը բէտնայ։ Էն էլ ասաւ, թող ճնայ։ Էտու յետևը մէ տարի նշանլու ճնաց։ Աղջիկը կայնաւ միտք արաւ, ասաւ, լաւն էն ա, որ ես էթամ ընձի սրպանեմ, չէթամ կըռապաշտն առնեմ, իմ լուս հաւատը չկուրցնեմ։ Էտ աղջիկը վեր կացաւ լուս բացուելու ժամանակ յելաւ գնաց յիրանց սարը. գընաց որ յինքն յիրան սպանէր։ Գնաց տեսաւ՝ որ մէկ խաչքար ընդեմ անկուկ էր։ Զորաւ աղօթք արաւ. յիրան Աստուած ապաւանեց, արտասունք շատ թափեց յաչքերից։ Մէկ էլ յերկնից տեսաւ որ մէկ դար կար կշտի խեռ։ Տեսաւ որ մէկ դուռ բաց հէլաւ, գնաց տեսաւ՝ որ մասունք կար էտու մէջ. մտաւ մէջն աղօթք արաւ։ Ամրան օր էր, ծարվրցաւ, գնաց տեսաւ, որ յառքից ջուր էր գալըմ։ Գնաց յիրեք ճանկ ջուր խմաւ, էտե սիրտը շատ պընդաւ, յետ դարձաւ հէլաւ դուրս, էն դուռը փակուաւ, յինքը դարձաւ եկաւ յիրան տեղը։ Քաշեց վեց ամիս՝ էրեխէն փորի մէջը մալըմ արաւ. ջառիէքը (աղախին) խաբար տարան մօրը, թէ աղջիկդ էրեխով ա։ Էկաւ մէրը տեսաւ, որ աղջիկը էրեխով ա, փորը լիքն ա, մէ դէրը դանեց (մի բռունցքով խփեց) աղջկայ գլխին, ասաւ. Սև գցեմ գլխիդ, մենք դենջրցեր ինք, մկա Խայասուն ուզում ես տաս բրդել։—Ինչի՞ խամար եմ տալում եմ բրդել, խարցնում ա աղջիկը մօրը։ Մէրը ասում ա աղջկանը. Դու երեխով ես, կըռապաշտ թագաւորը գիմանայ, կըգայ մեզի կըջարդայ։ Էն էլ կը

վեկալայ կասայ. Ես էդ բանի տէրը չեմ, անունը մարդ իմ կուշտը չէկերայ։

—Բա որ չեկերայ, էդ էրեխէն յանստ ա։

«Ես որ խառվեր եմ, հեվեր եմ գացեր եմ մեր սարի մէջը, որ ընձի ըսպանի, էտա տեղը մէկ մատուռ կէր, գացի իմ աղօթքն արի, ջուր խմի, էրեխէն էդ ջրից հելաւ, Աստուած իր տեղը, ես իմ տեղն եմ անարատ»։

Հէլաւ էտի գնաց թագաւորին յիմաց ըրեց, թէ քո աղջիկըն էրէխով ա։ Թագաւորի խելքը գնաց դիվանի մէջն հնկաւ։ Յիրա տղայ Թորոսը և էլ յիրա վեզիրը ասին. Էդ ինչ հելաւ քեզի։ Յինքը վեկալեց թէ մեր աղջիկը էրէխով ա հելէ, կռապաշտի թագաւորը կըգայ մեր գլուխը կդանայ։ Յիր տղէն, Թորոսը, ասաւ, թէ թագաւոր, մեծ ա զօրութունը Աստծուն, մի երկուղ արա։ Վերցրեց թագաւորը ասաց. Իմալ երկուղ չանեմ, ախր իմ աղջիկը ճրժովցէր ա. կռապաշտ թագաւորը մեր գլուխը կը կտրայ։ Էն էլ վեկալեց ասաւ, թէ կարելի ա, թէ Աստուածութունը մեզի կամեցեր ա։—Ի՞նչ ա կամեցէ։ Թորոսը վէ կալում ա ասում ա, թէ կարելի ա մեր քվորից մէ հատ տղայ հընի՝ կռապաշտին յաղթայ։

Ինն ամիս, ինն օր, ինը սնաթը թըմբմաւ, էդ Փիրզատ—խանըմը պարկաւ մէ տղայ բերեց։ Մէ ամիսը մէ տարուան գէօրա բէտրցաւ (մեծացաւ) էտ տղէն։ Էտի հելաւ մէ տարեկան, տասվերկու տարեկան տղի բատա հելաւ. ինչ անուն գնում են, չի վեկալում ա։ Էտ տղէն ա վիր տղի հետ խաղում ա, զանըմ ա, գլուխն ա ջարդըմ, ոտն ա ջարդըմ, յիր հարևանները յիրան Պապին դանդրտուր են հընում են, թէ մեր տղերքին ջարդըմ ա, սրպանըմ ա։ Էն էլ վերցնում ա ասում ա յիր տղայ Թորոսին. Դի մէ ձիան վրայ էթա յիրա ընկերների խեռ աւ (որս) անայ, սէրը քցայ ձիուն վրայ։ Բերին մէ ձի տուին, հելաւ խէձաւ գնաց աւ անելու, գնաց էլի էն մատուռին թուշ հելաւ. ձիան մէջքը թալեց, հնկաւ քիթ ու բերնի վրէն տղէն, ուշքը գնաց. հելաւ որ էն մատուռը էկաւ երազ, ասաւ թէ քու անունը Մհեր ա. քո մօր արտասունքը հելաւ առ Աստուած, ինչպէստ որ մատաղը, Աստուած ա քե տուեր ա. քու անունը Մհեր ա. մկա կէթաս քո Պապ թագաւորին կաես, տասը հատ անծին էրինջ բերայ, գահանէք բերայ, որ պատարագ անեն, մատուռի դուռը բացուի, որ հմայիլը դնես ծոցդ, թուրը թալես թեզդ, գիւրզն առնես ձեռդ, էթաս կռիւ անես կռապաշտի խեռ, որ հայի հաւատը չկորի։ Քո ձինը, Քուռկէջալաթը (ձիու անունը) հէրի (այրի) մէջն ա, էտի Աստուած քեզի զամաթ արեր ա։ Էտ Մհերը հելաւ գնաց մօր մօտն ու քեռի Թորոսի կուշտը, ասաւ թէ գնացի մատուռի դէմը, ձին մէջքը թալեց, ես ընկայ,

ուշքս գնաց, էրաղ տեսայ, թէ քո անունը Մհեր ա, գնա տասը հատ անծին էրինջ բէ մատղա, որ քո մուրազը կատարուի։

—Մէրն ասըմ ա. Ի՞նչ ա քո մուրազը։

Էն էլ ասըմա՝ իմ աղէն ասըմ ա թէ, որ մատղեցիր պրծար, էն մատղի արնով էրեսդ լուացա, որ քո մուրազդ առնես։ Վեկալում ասում ա, թէ որ մուրազդ առար, մատուռիդ դուռը կը բացուի, մատուռի անունը Մայրամ Աստուածածին ա, քո թաքը, քո վակասը, քո գիւրզը, քո համայիլը էնտեղ ա, կըվերցընես համայիլը գնես ծոցդ, էն վախտը որ համայիլը դրիր ծոցդ, քամբը կապես, թագը դնես գլխդ, գիւրզն առնես ձեռդ, Քիւրկէջալաթը խնծնես, էթաս քո դուշմնին բըրդես։ Մկայ ես էկերեմ, որ տասը անծին էրինջ տանեմ. դուք ի՞նչ էք ասում էք։

Մէրը էթում ա Պապ թագաւորի կուշտը, ասում ա. Թոռդ էկեր ա, տասը անծին էրինջ ա ուզում ա, որ տանի Մայրամ Աստուածածնին մատղայ։

Էն էլ ասըմ ա. Թո՛ քառասունը տանայ։

Հետոյ Պապ թագաւորը հընում ա, շահարի մէջ բոռալ ա տալըմ. Յարէք էթանք Մայրամ Աստուածածին, խաչով խաչվառով, գհանով մատաղ անենք։

Էլիկն էլ ասում ա. Ի՞նչ մատաղ ա։

Վի կալըմ ա ասում ա, թէ մեր Մհերը էրաղ ա տեսէ պըտի տանենք մատաղ անենք։

Հընում են, առնում են քառասուն հատ էրինջ, գեղախուիկ էթում են. դաղանն էլ խեսը։ Էթում են ընտե մատաղ են անում են։ Էն ինչ որ գհանէն ա, պատարագ ա անըմ ա, էն ինչ որ Մհերն ա՝ մատաղ ա անըմ ա։ Մատղի արնով յերեսը ջրի տեղ լըւում ա, Մայրամ Աստուածածնայ դուռը Աստուծու հրամանով բացւում ա, Մհերը մտնում ա ներս, թաքը դնում ա գլխը, գօտիկը կապում ա մէջքը, գիւրզն առնում ա ձեռը ասում. Էս գիւրզի գլխը կէս խալվար թուջ հընի, որ ես էլ տղամարդ հընիմ, իմ դուվաթը կը յաղթէր կը վերցընի։ Թորոսը խասաւ յերեսը պաչեց, ասաւ. Կեցէ իմ քվոր տղէն, ես գինամ որ իմ դուշմնին կը յաղթայ։ Ղանչեցին թէ, Մհեր, արի, մատաղ կեր։ Ասաւ. Շնորհակալ եմ, ձեզի ասուշ հընի։ Ասին. Հընչի՞ համար, դու էլ անօթի ես, յարի կեր։ Ասաւ. Ինչպէսա Աստուած ընձի կամեցեր ա, սիրաս լըցուեր ա, կուշտ եմ, էթամ Քուրկէջալաղը քաշեմ դուս։ Գնաց քաշեց բերեց դուս, ասաւ. Քեռի Թորոս, դեամ չկայ զանեմ բերանը։ Ասաւ, թէ մէջքը թալուկ ձիու դեամ խան բերնէն, զարկ Քուրկէջալաղու բերանը, այեարն էլ (թամբ) զար վըրէն։ Բերեց զանեց վըրէն։ Մէկ էլ ձէն տուին, թէ անօթի ես, յարի խաց կէ։

էն էլ վեկալեց ասաւ, չեմ ուտի. էդ մարդիկը վէկալին թէ գո՞ր ես էթում։ Էտի ասաւ թէ իմ Պապ թագաւորն ասում էր գնա աւ անելու, մկա ես ուզում եմ էթամ աւ անեմ։ Հելաւ ձինը խեծաւ, գնաց։ Գնաց աւի տեղ ջանաւար ժողվեց՝ առաւ էկաւ։ Քեռի Թորոսը կայնաւ դէմը, ասաւ. Էդ ի՞նչ ես բերում։ Ասաւ. Աւ եմ բերում եմ։ Ասաւ. Էդի աւ չէ, չոլի ջանաւար ա, էլիկը կը վախենայ։ Մհերը թողեց, էդ ջանաւարները փախան գացին էլի յիրանց տեղուանքը։ Էսդուց դէն գնաց աւ անելու։ Օրերից մէկ օր մէկ պառաւ կնիկ էկաւ էտու յառէջը կտրեց, ասաւ. Մհեր ջան, շատ շնորհակալ ենք քեզնից։ Ասաւ. Ինչի՞ համար շնորհակալ ես։ Ասաւ. Էնդու համար շնորհակալ ենք, որ էս տասվերկու տարի մեզի պախում ես։ Ասաւ. Էմա՞ւ։ Ասաւ. Քո մէրը թագաւորը տվեր էր կռապաշտ թագաւորի տղին։

Վեկալաւ ասաւ, թէ բա էդ ի՞մալ հէլաւ, որ իմ մէրը չէ գացէ էդ թագաւորի տղին առէ։ Ասաւ. Էն վախտը որ քո մօրն ուզեցին, տասվերկու տարի ժամանակ դրին, մկայ տասվերկու տարին թմբմեր ա, չեմ գինում եմ քեզնից երկուզ են անում են, չեն գալուն են մէրդ տանին, թէ չեն գինում են, թէ տասվերկու տարին թմբմեր ա։ Էն էլ գալըմ ա, պապի եախէն բռնում ա, թէ պապի, իմ մէր վի՞րն ես տուէ մարդի։ Էն էլ վեկալում ա ասում ա. Քեզ ինչ, վիրը տամ՝ տամ։ Վերցնում, ասում ա. Ձէ, ես պտի յիմանամ, տենամ վի՞րն ես տուէ։ Էն էլ վեկալում ա ասըմ ա. Էդ զսէն (պատմութիւն) քեզի վի՞րն ասաւ։ Էն էլ ասըմ ա՝ թէ ֆլան պառաւն ա ասեր ա, թէ տվէ կռապաշտի տղին, հը՞նչ ես դու տվէ կռապաշտի տղին։ Թագաւորը զանչում ա պառվին ասում. Պառաւ, քեզ ի՞նչ իրաւունք կայ որ Մհերին էդ զսէն ասեր ես։ Պառաւն էլ ասում ա, թէ թագաւոր, գլխիդ զուրբան հընեմ, իմ տղերքին կռապաշտ թագաւորը տարաւ սըպանեց՝ ես էտու համար սիրաս մըռմռում էր, ասեցի, էդու համար թագաւորը ընդուն ձեռ չտուեց։ Էդ պառաւը դարձաւ գնաց։ Էտ թագաւորը ասաւ Մհերին. Մհեր ջան, դու էդ պառուին մի յանկաջ արա՝ էտի ջոջրցեր ա, ծռեր ա։ Նոր Մհերը կասայ. Խացն ու գինին, Տէր կենդանին, չեմ ճնայ, կեթամ կռիւ։ Ղանչայ թէ Թորոս, ես չեմ կանում եմ, դու քու քվոր տղին յաղթայ։ Էն էլ կըզայ կասայ. Մհեր ջան, ծուռ ծուռ մի հէլի։ Էն էլ կասայ չըլնի, կասայ, ես ընձի պտի սպանեմ, ես պըտի էթամ կռապաշտի հետ կռիւ անեմ։ Կը վեկալայ կասայ որ հէթում ես, զօրք տամ քեզի։—Ես իմ տղամարդութուն, զօրքով չեմ էթայ, իմ թուրը թեւս ա, համայիլը ծոցս ա, ես մենակ պըտի էթամ։ Գընի յիրան գեղի մէջն յիրան էլիկի հետ հալալամիշ գընի. «Էթալն իմ ձեռը, կասայ, գալըն

Աստծու ձեռը, յուս ունիմ Աստծուց, քեռի Թորոս, կարիճութիւն անեմ»։ Էնտեղ քեռի Թորոսը կասայ. Մէ ձի ես խեճնեմ մէկ դու, էթամ ճամբախը նըշանց տամ։ Հընկնում են ճամբախը էթում են։ Քեռի Թորոսի ձինը էտու ձիան խետ չի էթում ա, էտու համար ասում ա. Քեռի Թորոս, ձինդ քշէ խասցրա ընձի. էն էլ ասում ա. Քո ձինը խրեղէն ա, իմնու նման չէ։ Էն էլ ասում ա. Ճամբախը նշանց տու յետ դարձի։ Էն էլ վէկալում ա ասում ա. Մհեր Ջան, քեզի չեմ կանայ թողի մենակ։ Վեկալում ա ասում ա. Ջէ, դու դարձի։ Քեռի Թորոսը էս խէտ նշանց ա տալում ա ճամբախը, յետ ա դառնում ա։ Մհերը դառնում ա քեռի Թորոսի ձեռը պաչում ա, ասում ա. Ընձի օրհնա։ Էն էլ ասում ա. Աստծու օրհնիթքը վրէդ հընի։ Աստուած քո բանն աջողա, գնա։ Մհերը հընկնում ա ճամբախ էթում ա։ Անահում (անհուն) շատ զօրունի ռաստ ա գալում։ Ղօրունը կտրում հնցնում ա։ Էն եան քամակը առնում ա։ Խարցնում ա, թէ դո՞ր էք էթում էք։ Ասում են, թէ էթում ենք Կապուտակողը Պապ թագաւորի վրայ կռիւ։ Մհերը խարցնում ա ի՞նչ մարդ էք, ասում են՝ մենք կռապաշտ թագաւորի զօրունն ենք։ Մհերը խարցնում ա, թէ թագաւորն էլ էկէ՞ր ա։ Ասում ա՝ էկեր ա, յառէջ ա։ Մհերը դառնում ա հետ, զօրունի հետ մտնում ա կռիւ։ Դնում ա ձեռը համայիլի վրայ՝ ասում ա. «Քեզ մեռնեմ, Մայրամ Աստուածածին, հնձի զուվաթ տու, որ կռիւ անեմ»։ Մտնում ա զօրունի մէջը բիրդան ջարդում, որն յինքն ա ջարդում ա, որն էլ ձինն ա ոտի տակ տալում։ Որը փախնում ա, որը ջարդում։ Խասնում ա կռապաշտի թագաւորի գլուխը կըտրում ա, առնում բերում տալում ա Պապ թագաւորին, ասում ա. Հրամեցի կռապաշտ թագաւորի գլուխը քեզի բերի փէշքէշ։ Ասում ա. Կէցէ իմ Մհերը։ Գալում են համէն էտ շհարին մախլուխը թալում են Մհերի ձիան ոտը, ասում են մեր հողին ազատեց կռապաշտի ձեռնէն։ Պապ թագաւորը վէ կանում ասում ա, թէ Մհեր Ջան, փաշէն յիր խօրից զօչաղ ա, ընդու գլուխն էլ կտրա, իմ Ջանը դինջանայ։ Էն էլ ասում ա. Յուս ունիմ Աստծուց, տարին թմբմի էթամ ընդու գլուխը կըտրեմ առնեմ գամ։ Պապ թագաւորը ասում ա. Հը՞նչ ես տարին թմբմցնում ես։ Ասում ա. Ղօրուն դրըստայ, որ էթամ զօրունի խետ կռիւ անեմ։

Որ տարին թմբում ա, Մհերը հընում էթում ա Մսըր։ Էթում ա Մսըր, չաղբրը գանում ա հեռուն, մէջը նստում ա։ Յիր ձինը կապում ա չաղբի զրաղը, արխային պառկում ա քնում ա։ Մէկը էթում ա խաբար ա տանում ա փաշին, փաշէն սաղ ընի, մէ չաղբը զարկուկ ա քո զուռուխի (հողի) մէջ։ Էտի յիմանում ա, Մհերն ա, տասը ձիաւոր խէծրցնում ճամբում ա, գացէք տեսէք

ինչ ջուրա մարդ ա։ Գալում են, տենում են որ չաբրի մէջը պառկէ քներ ա, կէսը դուսն ա, կէսը ներսն ա ու էտու շնչից չաբրը բանձրանըմ իջնում ա։ Գալըմ են էտուն խաբար են տալըմ են։ Հը՛, ի՞նչ մարդ ա, հարցնում ա ըտոնցը։ Էտոնք էլ ասում են. Զենք գիտում, շատ բէդ մարդ ա, կէսը չաղբի մէջն ա, կէս դուսն ա, ու էտու շնչից չաբրը բարձրանըմ ա, իջնում ա։ Էտի ասում ա թէ տղէրք, յէլէք իշտա զօրուն կայ գացէք չորս բոլորը բռնէք։ Գալըմ են զօրունը չորս բոլորը հասարի պէս բըռնում են։ Մհերը վէր ա հընում ա, զանչում թէ էլ քէ մեռնեմ Մարութենի Մայրամ Աստուածածին, քէօմակ տուր։

Ձինը խեծնում ա, զօրունը բիրդան ջարդըմ ա։ Տանում ա խասցնում ա Մսրայ մէջ։ Որ ըսպանում ա պրծնում ա, էթում ա փաշի գլուխը կտրում ա։ Կտրում պրծնում ա, ուզում ա գլուխը վերցնի բերայ տայ Պապ թագաւորին, յաչքը հընկնում ա փաշի կնկան, տենում ա շատ խօրոտ ա։ Փաշի կնիկը ըստուն աւլամիշ ա անըմ ա, թէ ես քեզի առնեմ, մացի էստեղ, թագաւորութունը քեզի հընի։ Մհերը ասում ա. տասնը՛խինդ օր ասում ա։ Իմ մարդութունը ի՞նչ ա որ ես էստի ասամ կռապաշտի կնիկ առնեմ, էթամ էլի քեռի Թորոսի կուշը։ Էնդէ կնիկը ասում ա. Հնչի՞ թողես էթաս, թագաւորութունը փի՞ս ա որ չես ուզում ես ասաս։ Էն էլ ասըմ ա. Զէ ես ուզում եմ էթամ էնդէ։ Վեկալում ա ասում ա. Մի գնա, էնդէ Պապ թո թագաւորութուն անա, դու էլ էստեղ արա։ Էն էլ ասում ա. Զէ, ես պտի էթամ։ Մհերը վեր ա կենում ա, էթում ա։ Դառնում էթում ա Կապուտակողը։ Հրամեցի, ասում ա, Պապ թագաւոր, էսի քո դուշմնի գլուխը կտրեցի բերի։

Շնորհակալ եմ, ասում ա։ Էս խետ Մհերը յիր ձինը խեճնում էթում ա աւ անելու։ Մնում ա մէկ տարի ժամանակ. տարին պտրտում ա՝ Մսրայ փաշի կնկնից մէ տղայ ա հընում ա։ Մնում ա տղէն ջօջընում ա, անըմը դնում են Մսրամելիք։ Տղէն էթում ա յիրան հնկերտանքի խետ խաղում ա։ Էդ վոր մէկին խասնում ա՝ զանում ա ոտը, թեը ջարդում ա, ըսպանում ա։ Գալըմ են գանգատուոր յիր մօրը։ Ախար քո տղէն մեր տղին սպաներ ա, տենանք ինչի՞ խամար ա ըսպանում ա։ Մէրը Մսրամելիքին զանչում ա, ասում ա. Հը՞չիս քո գրկեցին զանում ես, ոտը կտրում ես։ Էն էլ ասում ա, թէ էտանք ասում են ընձի քէաֆրի տղայ ես, քո մէրը սիրող ա արեր ա։ Էտի որ ասըմ ա սիրող ա արեր ա, մէրը ասում ա. Որդի Ջան, Կապուտակողի Մհերը էկաւ զօրունը ջարդեց, խօրդ գլուխը կտրեց, էկաւ ընձի սիրեց։ Մսրամելիք էլ ասաւ. Ջանիս յուղտ հընի, որ քանի Ջանս սախ հընի, Հայստունը բրդեմ, հայիֆս առնեմ։

Գանք Մհերը։

Բերեցին Վանայ մէկ աղջիկ ուղեցին Մհերին։ Մհերը պսակուաւ, մէ տարի ժամանակ քաշեց, կնիկը պառկաւ երկու տղայ բերեց, Ջեվիկ, (եկուորեակ), բերեցին կնքեցին, մէկի անունը Աբամէլիք, մէկի անումը Սանասար դրին։ Հէլաւ որ էտոնք կնքուան, Պապ թագաւորը մեռաւ։ Ձէնը գնաց Մսրամէլիքին։ Ասին. Մսրամէլիք, Պապ թագաւորը մեռեր ա, ինչ կանաս էն էրա։ Էն էլ վէ կալեց թէ Մհերը սաղ ա, չեմ կանայ Մհերի վրայ քշի։ Մնաց որ յիրեք տարին թմմաւ, Մհերն էլ մեռաւ։ Ձէնը գնաց հնդաւ Մսրամէլիքի յանկաջը։ Էկաւ Մսրամէլիքը Կապուտկողայ էլը քաշեց տարաւ, տարաւ Բուռկէջալաթը, տարաւ խաղնէն, տարաւ Մհերի կնիկը, մնաց երկու յեթումը, քեռի Թորոսը։ Քեռի Թորոս, ինչ անենք, մենք աղքատցեր ենք, ասին Աբամէլիք ու Սանասարը։ Վէ կալեց ասաւ. Ինչ անենք, թանին տարան։ Ասին. Մեզ իրաւունք տու էթանք մէ տեղի վրայ աշխատանք անենք։ Էն էլ ասաւ. Որդի ջան, վոր գացիք, խորոտատես տղերք էք, վիր կուշտն հընկաք՝ չէք դառնայ յետ, ընձի կը մոռնաք, չէք դայ։ Աբամէլիքը վէ կալում ա ասում ա. Եփօր մոռնանք, երկու յաչքով քոռնանք, չենք մոռնայ քե։ Սօրա [1]) քեռի Թորոսի ձեռքը պաչում են, խալալամիշ են հընում են, հնկնում են ճամբաս էթում են։ Գեղէ գեղ, շահարէ շահար էթում են։ Էթում են, մէ բարակ ճամբաս հնկնում ա յառեջները։ Մէկ ջոջ ձորի մէջ էթում են։ Էթում են, տեսնում են, որ մէ դուրան տեղ չայիր չիման ա, չորս բոլորը դար ա, էս մեր գեղի պէս (Ղըշլաղ), էդ մէ ճամբաին ա, որ գացած են։ Տեսնում են մէ յաղբուր կայ, մէ ջոջ չայ կըտրում հնցնում ա, էնդե Աբամէլիքը Սանասարին ասում ա. Էստի մէ շէնլիկ շինենք։ Էն էլ ասըմ ա թէ ինչի՞ համար շինենք։ Վէ կալում ա ասում ա, թէ մենք էլ չենք էթայ Կապուտկողայ, որ էն կռապաշտը մեղի ջարդայ։

—Բա քեռի Թորոսին ինչ անենք։

—Շինենք, շելիկը էթանք առնենք գանք։

Վէ կալում ա Աբամէլիքը ասըմ ա. Ես պատաշար եմ, տունը կը շինեմ։ Սանասարն էլ ասում ա. «Ես աւ անող եմ, աւ կանեմ կը բերեմ, ընդով կապրենք»։

Ձունք կէսօրին աւ կանեն, կէսօրէն յետ կըգեն յիրանց շէնլիկ շինեն։ Էն ինչ որ Սանասարը աւ էր անում էր, Աբամէլիքը քար էր տաշում էր։ Կէսօրնէ յետ յիրանց պատը շարում են։ Ձումքի խինդ ամիս, երկու հարիր շէնլիկ շինին երկու աղ-

[1]) «Ցետոյի» փոխարէն յաճախ ասում են՝ սօրա։

բրով։ Աբամէլիքը կայնաւ ասաւ, թէ Սանասար, մենք շորէն հէլանք, էթանք մէ եանի վրայ շոր բերենք։ Վէ կալեց ասաւ. Ուզում եմ մէ բերտ շինեմ, նոր էթամ։ Բերին շինին բերտը։ Մնաց գլխի գուբէն, ծածկը որ քաշեն, չեն կանըմ քաշեն երկու ախպրով։ Վէ կալում ա Սանասարը Աբամէքին ասըմ ա, թէ Աբամէլիք, մենք չէնք կանայ, էթանք պտըտենք մարդ բերենք քէօմակ, էտի քաշենք։ Հէլան հնկան ճամբաս, գացին, Բաղտըդու դուռ հելան։ Մութը տուեց՝ գացին մէ դուռ տփին, մէ պառաւ դուռ էկաւ։ Նանէ ջան, մեղի տեղ տու նստենք, յէսօր գիշեր սըթըրվինք, յառաւօտ յըլնենք էթանք մեր բանին։ Նանէն խարցրեց թէ հաւատ էք։ Դէ ասաւ բէքնայ (անհայրենիք) էնք, տէր չունենք, հէր չունենք, մէր չունենք։ Ասաւ թէ յարէք ձեղի անեմ ընձի տղայ, մացէք իմ տունը։ Ընդունք էլ ասին, թէ մէ քանի օր մնանք, տեսնանք մեր խօսքը յիրար խետ կըգա։ Հելան մէ վեց օր, օխտ օր մացին։ Աբամէլիքը Սանասարին ասաւ. «Լաւ բան ա, մենք որ մացինք էստեղը մէ վախտ կը մնանք, թէ որ լաւ հէլաւ կէթանք մեր քեռի Թորոսին կը բերենք էստե։ Մէ քանի ժամանակ մնացին. էտե Բաղդըդու խալիֆի զայֆաչին մեռաւ։ Բաղդըդու խալիֆէն յիրան վազիրին յղրկեց թէ գնա շահարի մէջ ընձի մէ լաւ տղայ գտի, առ յարի։ Ման էկաւ, էկաւ պառաւի դուռը։ Աբամէլիք ու Սանասարը նստուկ ին պառաւի դուռը։ Ասաւ. Նանէ, ասաւ, էդ տղէքից մէկը տու խալիֆին ղուլլուղ անա։

—Ի՞նչ ա ընդու ղուլլուղը։

—Ղայֆա էփա ու չրուխ սարքա։

Պառաւն ասաւ. Ինքը ամիս փորս եմ պախե, տասվերկու տարի էլ ջրից, կրակից ու ճրագից ազատ եմ արէ, չեմ տայ։

Հէլաւ էդ վազիրը գնաց թագաւորին ասաւ։ Թագաւորին որ ասաւ, թագաւորն էլ ասաւ իմալ տղայ ա։ Ասաւ շատ խորոտիկ, ջահիլ տղայ ա, կանամ ասեմ չըճարուի էստե։ Վէ կալեց ասաւ. Գնա ամիսը տու քառասուն քիսա, թաքիլան առ յարի։ Էկաւ ասաւ. Պառաւ, ասաւ, ամիսը քառասուն քիսա կըտամ քո տղին, թո գայ։ Էն էլ խարցրեց. «Աբամէլիք, Սանասար, ո՞ր մէկդ կէթաք»։ Ասին որ մեղի ղըրկում ես, ջըխտով էլ կէթանք։ Գացին խալիֆի աթաքը (մօտ)։ Վէ կալեց խալիֆը ասաւ. Ձեր անունը ընձի ասէք։ Վերցրեց ջոջը ասաւ. Իմ անունը Աբամէլիք ա, էդուրըն էլ Սանասար։ Էս տղերքը խալիֆին շատ դուր էկան։ Մէ յիրեք տարի ծառայութուն արին։ Յիրեք տարին որ թմմաւ, Սանասար ասաւ Աբամէլիքին. Բոլ ա մացինք էս տեղը, մեր քեռի Թորոսը անմահական ա, էթանք ընդուն պախենք։ Աբամէլիք ասաւ. Էթանք խալիֆի սօլերը շիտկենք, տեսնանք ինչ ջուղար կը-

տայ մեզի։ Գացին խալիֆի սօլերը շլտակին։ Խալիֆէն ասաւ. Որ-դի Ջան ընչի՞ իմ սօլերը շլտակիք։ Աբամէլիք վէ կալեց ասաւ, թէ մեզ հէր, մէր չունինք, մէ քեռի ունինք, անունը Թորոս ա, անմահական ա*) յինքը, մահ չունի, ուզում ենք էթանք պահենք։ Խալիֆէն ասաւ. Ձունք հիմի ընչի՞ չիք ասում, թէ քեռի ունէք։ Վեկալեց ասաւ. Դու չիր խարցնում, մենք էլ չինք ասում։ Ասաւ. Ձեզի չեմ յըղրկի էթաք, դուք գացիք չէք գար։ Մարդ ճամբեմ, քեռի Թորոսին բերել կը տամ, ձեր ընակարան դո՞ր ա։ Թէ մեր ընակարան Կապուտկողն ա։ Մարդ դանչեց, Թուղթ կրեց Կապուտկողայ վրայ յղըրկեց, գնաց քեռի Թորոսի կուշտը։ Տարաւ Թուղթը տուեց քեռի Թորոսին. Շատ բարև քեզի, ասաւ, քեռի Թորոս. Աբամէլիքն ու Սանասարն են գրած։ Լաւ տեղն ենք հնկէ, Բաղդադու խալիֆու ձեռն ենք հնկէ, խնդրում ենք որ դու մեզի սիրես գաս էս տե Բաղդադ։ Եռասուն տուն Կապուտկողայ մէջն ա մացէ. քեռի Թորոսը էդ մախլուխին դանչեց, խեռներ խալալամիշ էղաւ, թէ ես էթում եմ, մացէք բարով։ Էդոնք ասին, թէ քեռի Թորոս, դու որ գացիր, մեր հալը իմմալ գլնի։

Որ գացի էնտե լաւ հէլաւ ձեզի կը տանեմ։

Վէ կացաւ էդ մարդը գնաց Բաղդադ։ Գնաց խալիֆին ձեռ տուեց։ Խալիֆէն ընդուն տեղ տուեց՝ նստաւ։ Մէկ ժամանակ ճնաց, շատ սիրեց քեռի Թորոսին։ Քեռի Թորոսը տեսաւ յիրանց ապրուստը չկնում ա։ Աբամէլիք ասում ա. Հնչի՞ չկնում ա։ Քեռի Թորոս ասում ա. Մեր դիւշմանը մացեր ա Մըսրը, մենք էկեր ենք էստե նստէր ենք։ Բա չիգանք ի՞նչ անենք, քեռի Թորոս։

Քեռի Թորոս ասում ա, Էկեր ենք, ձեղնից մէկը պտի կարգուի։

Աբամէլիք ասում ա. Հըլա մենք թաղա ենք էկէ ըստե։

Վէ կալըմ ասըմ ա. Գանք չգանք, պտի մեզի զուլլուղդար խարս հնի։ Աբամէլիք էլ, ասըմ ա. Դու գիդաս, իմալ ուզում ես, արա։ Քեռի Թորոսը Սանասարին ճամբում ա խալիֆի կուշտը, ասում ա. Պըտի մեզ խաց հնի, մենք ուտենք։

Խալիֆէն ասըմ ա. Խացը բոլ ա, էտ ինչպէստ բան ա, որ ասըմ ա մեզի խաց հնի, մենք ուտենք։ Դէհ Սանասար Ջան, դու գնա, կը գրկեմ յիրան կը դանչեմ։

Դանչեց քեռի Թորոսին, խարցրեց, թէ քեռի Թորոս, հընչ իր էտ բանն ասում, խացդ համընից բոլ ա։

*) Քեռի Թորոսը շատ երկրներ էր պըտըտէ, պատահեր էր անմահական ջրի, խմեր էր ու իմացեր էր, որ ինքը ծաղկի պէս թաղացեր ա։

Խալիֆայ, գըլխիդ զուրբան հընիմ, ախր դու լաւ պէտք ա որ խասկանաս։

Էն էլ վեկալեց, ինչո՞վ խասկընամ։

Վեկալեց ասաւ, թէ մեզի մէ խարս պըտի հընի, որ մեզի կառաւորայ։

Էն էլ վեկալեց ասաւ. Քո տղերքի վո՞ր մէկն ա ջոջ։

Ասում ա. Աբամէլիքը Սանասարայ ջոջն ա։

Բերեց յիրա աղջկայ անունը Նազլու-խանըմ էր, տուեց Աբամէլիքին։ Պսակեց տարաւ քեռի Թորոսի տունը։ Մէ տարի ճնաց, պառկաւ մէ էրեխայ բերեց, էկան դիվանխանի մէջ խալիֆին ու քեռի Թորոսին յաչքալուսէք տուին. Ցաչքդ լուս հընի, քեռի Թորոս։

Ի՞նչի համար էք ընձի յաչքալուսէք տալում։

—Խարսդ պառկեր ա մէ տղայ ա բերեր ա։

Քեռի Թորոսն ասում ա. Դէ խարսը տարէք դէն, ես գամ իմ էրեխէն տենամ։ Էկաւ տեսաւ, սըրտին չեկաւ. Թողեց գնաց։ Բերին կնքին, ասին. Քեռի-Թորոս, անունը ի՞նչ դնենք։

Ասաւ. Վ.ժիկ Մխո։ Ասին. Հընչի՞ ըտենց ալչախ (վատ) անուն դրիր։ Ասաւ. Ես էկայ տղէն տեսայ, դուրըս չեկաւ։ Խալիֆէն ասաւ. Հնչի՞ դուրդ չեկաւ, տղայ ա էլի։ Ասաւ, թէ մեր աղգէն խնկէն մէկ զօչաղ գըլնի, էտի ալչաղ տղայ ա։

Մէ տարի էլ ա ճնում, էլի պառկում ա մէ տղայ էլ ա բերում։ Զյերկընցընենք էմալապէստ քեռի Թորոսը իմալ էնի տեսաւ, էդ էլ էկաւ տեսաւ։ Տարան կընունք, ասին. «Քեռի Թորոս, անունը ի՞նչ դնենք»։ Ասաւ. «Վեթօ»։ Էլի մէ տարի ճնաց, մէ տղայ էլ հէլաւ, անունը ի՞նչ դնենք։

—Ձէնով Օհան։ Էդու յէտև մէ տարի էլ ճնաց մէ տղայ էլ հէլաւ։ Քեռի Թորոսը անունը դրեց Բռնած Կուռիկ։ Էդուց յետի քեռի Թորոսը էկաւ նստաւ յիր տունը, միտք արաւ, միտք արաւ, վեկալին Աբամէլիքն ու Սանասարը ասին թէ հնչի՞ս էտտա միտք անում։

Քեռի Թորոսը ասաւ. Միտք էմ անում թէ աշխարհքի էգն ա շատ թէ որձը։

Աբամէլիքը վեկալեց ասաւ, թէ հը՞նչ բան ունես էդ բանի հետ։

Վեկալեց ասաւ, թէ ձեր մըտքին վո՞ր մէկն ա շատ։

Վեկալում ասում են էրկու ապրրով, թէ կարելի ա որձը շատ հընի էգի վրայ։

Վեկալում ասում ա, թէ մենք էգ ենք, վորձ չենք։

Աբամէլիքը ասում ա. Հը՞նչ ենք էգ։

Ասում ա, թէ յիրեք թոռ ունենք, յիրեք էլ մենք էնք, արաւ վեցը, մենք հելերենք կնկայ կնիկ։

Աբամէլիքն ասում ա. Հը՞նչ-ենք հելէ կընկայ կնիկ։

Հնդու համար ենք հելէ՝ որ մեր դուշման թողեր ենք կապուտկողը, մենք էկէ խալիֆին զուլուզ ենք անում։ Էս ջուրը զօրեղ չի, ձեր էրեխէն զօչաղ չէնի դուս։ Դացէք թագաւորին խնդրուեցէք մեզի իղին տայ, մենք էթանք, հինչ որ մացինք բոլ ա, շնորհակալ ենք։

Աբամէլիք ու Սանասարը գացին խալիֆի դէմը կայնան։ Խալիֆն ասաւ. Հնչէ՞ք կայնէ իմ դէմը։

Ասին. «Խնդրում ենք իղին տաս շահարից դուս գանք, էթանք մեր տեղը, բոլ ա ինչ որ զուլլուզ արինք»։

Խալիֆէն ասում ա. Հի՞նչ էք նեղանում ընձնից, քեռի Թորոսին զանչեմ գայ, տենամ հինչ կասայ։

Ղանչեց բերեց, «Քեռի Թորոս, ասաւ, նեղացէ՞ր ես ընձնից»։

Վեկալեց ասաւ թէ շատ շնորհակալ եմ քեզնից էլ, քո շէնլըկից էլ, խընդրում ենք որ մեզի ճամբու դնես էթանք մեր երկիրը։ Հէլաւ խալիֆէն էրկու խարիր տուն գրեց խեռը, գացին։ Գացին ճամբի մէջ տեղը, էն տեղը Աբամէլիքն ու Սանասարը կայնան մախլուխի յառէջ. քեռի Թորոսն ասաւ հնչի՞ կայնաք։

Ասաւ թէ էս ձորի մէջը շէլլիկ ենք շինէ, էթանք ընդե։

Քեռի Թորոսն ասաւ. Բա հնչի՞ ընձի չէք ասում։

Ասում են. Էրկու հարուր տուն շինել ենք։

Վեկալում ասում ա. Էսդու ճամբախը դռիրն ա։

Ասում ա. Էսենց սարի զոլթուզէն պտրտենք, էթանք էնդե ա։

Էդ մարդիկը հէլան գացին։ Գացին տեսան, որ մէ պտի յառու կտրում ա մէ ջոջ չայ յընցնում ա, ընդու կուշտն էլ տներ են։ Մտան մէջը տեղաւորան։ Բերեցին յիրանց խամար ժամ շինին, քարէ սուն շինին, գացին յիրանց բերան էլ շինին, քար քաշին վրէն։ Էկան, քեռի Թորոսը ասաւ. «Էկէք մեր գեղին անուն դնենք»։

Ասին. «Քեռի Թորոս, դու գինաս, ի՞նչ անուն ուզում ես, դի»։

Էն էլ ճամբեց խալիֆի կուշտը, զանչեց բերեց։ Ասաւ. «Խալիֆա, մեր գեղին անուն դի»։

Խալիֆէն ասաւ, թէ անբախտութուն հընչ էք արէ ընձի կանչէ, ըստու անունը գրուվ ա։

Քեռի Թորոսը ասաւ. Հացն ու գինին, Տէր կենդանին, չենք գրէ։

Ասաւ. Դրեր էք սուն վըր սան, թող անունը մնայ Սասուն։

Ընրանք էտէղ մէ տարի մացին։ Աբամէլիքի կնիկը պառկաւ մէ տղայ բերեց, քեռի Թորոսը անունը դըրեց Ճոռ Կուռիկ։ Մէ տարի էլ հնցաւ—մէ տղայ էլ բերեց, անունը գրեց Թար Ճընճղուկ։ Քեռի Թորոսը շատ տխրաւ, վեկալեցին Աբամէլիք ու Սանասար թէ հնչի՞ տխրար։

Ասաւ. Ուզում եմ Մհերի պէս տղայ հընի, էթայ գուշմի գլոխ կտրայ, որ իմ ջան դինջընայ։

—Աստուած մեծ ա, մէ երկուղ արա, ասին։

Մնաց էրկու տարի, էրեխայ չբերեց խարսը։ Էս հետ պառկաւ մէ էրեխայ բերեց։ Գացին քեռի Թորոսին զանչին, ասին. Խարսը պառկէ մէ էրեխայ ա բերէ։ Էդ մարդը հէլաւ գնաց տղէն տեսաւ, շիտկեց փորի վրէն, տեսաւ մսէ խաչ թիկունքն ա, թեւերը վեկալեց խաղցաւ։ Ասին. «Հնչէս խաղում»։

Ասաւ. «Սասունայ ճրագ կլաւ, Ասուն փառք հընի»։

Հէլաւ որ տարան կնունք, ի՞նչ դնենք, քեռի Թորոս, անունը։

—Ասաւ. Դաւիթ։

Ինչպէստ Մհերը ջոջցաւ ամիսը մէ տարուան բարա, Դաւիթն էլ ջոջցաւ ամիսը մէ տարուան բարա։ Բերեց Դաւիթին պախեց քեռի Թորոսը. վեց տարի պախեց, ջոջցրեց։ Պողպտէ չաքմա (տրեխ) արաւ խաղցրեց՝ ճխտեց ջարդեց։ Էտի որ հէլաւ վեց տարեկան՝ Աբամէլիքն ու Սանասարը հնկան մեռան։ Զէնը գնաց Մըսըր, թէ Աբամէլիքն ու Սանասար մեռեր են։ Մըսրամէլիք կը խարցնայ ընդոնց նստած տեղը ո՞ր մէկն ա։ Թէ թագա Սասուն են շինած՝ Սասուն ա։ Մսրամէլիք ասաւ յիրան զուլլուխտար Ղոզբէկին. Ցելի իմ յիրեք ոտանի ձինը խեծի, գնա Սասուն, թէ էթըմեերը, թէ էլը, թէ խազնէն քանդա ըէ։

Ասաւ. Հնձի զօրք տու, էթամ։

Հէլաւ հինդ հարիր ձիաւոր տուեց։ Ղոզբէկն էկաւ, էլը ժողվեց տարաւ, խազնէն տարաւ, էտ օխտը էթումը տարաւ։ Մացին քեռի Թորոսը, խարսը, ու եռսուն քեռասիր տուն։

Խարսը վեկալեց ասաւ, թէ քեռի Թորոս, ընձի վեկալ տար Բաղդադ իմ խերը պախայ։

Ասաւ. Ա՜յ հա՛յ, էտ ի՞նչ ես ասում։

Խարսը վեկալեց ասաւ. Հընչի՞։

Ասաւ. Ըսկի մէկի ցաւը չեմ, Դաւթի ցաւն եմ, պտի էթամ Դաւիթ բերեմ։ Հէլաւ գնաց Բաղդադ, խալիֆի կուշտ. ասաւ. Խալիֆ, իմ էլը, էթըմեեր տարաւ Մսրամէլիք։

Ասաւ. Կրակը թափի ձեր ազգի գլխին, ըմէն ձեր ազգի շուռութքն ա խանում։

ՀԱՅ ՀՆԱԳԻՏԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Ա. ՄԱՍ
7/XI

Ասաւ. Հընչի՞։

Ասաւ՝ թէ Մհերը էնտեղ սիրող արաւ, Մսրամէլիքը էնտուց հէլաւ, էկաւ ձեր ազգի քոր կորեց։

Քեռի Թորոսն ասաւ. Մէ ճամբախ տու ես էթամ։

Խալիֆը բերեց մէ թուղթ գրեց, ասաւ. «Գլխիդ դուրբան հընիմ, Մսրամէլիք, էն էլ քե դուրբան հընի, խաղինէն էլ քե դուրբան հընի, եթիմերը տու թող առնի գայ։ Ձես իտայ վախտիտ հաղըր մաց, ես էլ գալըմ եմ քո վրէն կռիւ, էդ օխտը եթումը իմ թոռներն են։

Քեռի Թորոսը էդ գիրը կառնի կէթայ Մսրը, կըտանայ կըտայ Մսրամէլիքայ մօրը։ Մսրամէլիքայ մէրը կը կանչայ Մըսրամէլիքին, կասայ. Մսրամէլիք, դուրբան քե, եթումերը տու թո քեռի Թորոսը տանայ։

Կասայ. Հընչի՞ տամ, չեմ տայ։

Մէրը կասայ. Հընչի չե՞ս տայ։

Կասայ. Էնդայ չեմ տայ, որ Դաւիթը նստաւ կուշտս մուրուքս բռնեց ծծխեց, յղոդ յիրար էկաւ։ Ուզում է տի մահացնել չթողին, ասին ափսոս ա էդ աղէն։ Էդու համար չեմ թողում, որ վախենում եմ ընձի վնասայ։

Մէրն ասաւ. Թող էթայ, բան չկայ, երեխայ ա։ Մօրն յականջ արաւ՝ ասաւ թուրը քաշեմ, բարձրըցնեմ, թո տկանց յընցնեն, իղին տամ էթան։ Ձէնով Օհանը հնցաւ, Թառ Ճնճղուկն հնցաւ, Վժիկ Մխօն հնցաւ, Բռնած Կուռիկն հնցաւ, Ճոռ Կուռիկն հնցաւ, Ցռան Վեթոն հնցաւ, մնաց Դաւիթը։

Դաւիթն ասաւ. Ես չեմ հնցնի։ Բոռաց, ճվաց՝ փախաւ։ Խասան բռնին տաս ջանով։ Թափ տուեց էդոնց, քցեց հնցաւ։ Քեռի Թորոս, ասաւ Մսրամէլիք, հնչի՞ չհնցաւ։ Քեռի Թորոսն ասաւ վախենում ա։ Ասաւ քեռի Թորոսը եթումերին, էկաւ Սասուն։

Մսրամէլիք դարձաւ գնաց մօրն ասաւ. Հինչ Դաւիթը տեսայ, ստոն ընձի կը սպանայ։

Մէրն էլ ասաւ. Օղուլ, երեխայ ա, վախեցաւ, էն ինչ ա որ քե սպանայ։

Գանք քեռի Թորոսն։

Քեռի Թորոսը երեխէքը առաւ էկաւ Սասուն։ Էկաւ տեսաւ որ ապրուստը չի հընում ա, զանչեց էդ եռսուն տանը, ասաւ. «Ցուէք էդ եռսուն հորթերը ես պախեմ, օրական մէ հաց կը տանեմ, ճժերս կը պախեմ»։ Տուին, տարաւ պախեց։ Դաւիթն էլ խեռը հընում էր էթում էր։ Ցիրկուն Դաւիթն բերում էր լողկցընում էր, ղընում էր ծոցը, շատ մուղաթ էր Դաւիթին։ Դաւիթին ասում էր, նեղանում ես (վատակիլ), մի գայ։

—Չէ, քեռի Թորոս, ասում էր Դաւիթը, ես էլ կը գամ։ Մնաց մէ ամիս խեռը էթում էր գալում էր։

Օրերից մէկ օր քեռի Թորոսը յետ հնկաւ, Դաւիթը հորթերը պախեց։ Կէսօրուան մօտիկ տեսաւ մէ հորթարած էլ էկաւ. գնաց վազէ վազ էդ հորթարածի կուշտը. խարցրեց թէ ի՞նչ հորթարած ես։

Ասաւ. «Քլից եմ»։

Ասաւ. «Անունդ ի՞նչ ա»։

Ասաւ. «Անունս Կիրակոս ա»։

Ասում ա. «Դու՞ յուստ ես»։

Դաւիթն ա ասում ա. «Ես Սասունայ եմ»։

«Բա, ասում ա, քո անունն հը՞նչ ա»։

Ասում ա. «Իմ անունը Դաւիթ ա»։ Վեկալում ա Դաւիթը էտուն ասում ա. «Կիրակոս. իմ հորթերը պախա»։

Ասում ա. «Հընչի՞ պախեմ»։

Ասում ա. «Քեռի Թորոսը գացեր ա չէ էկէ»։

Էտ էլ ասում ա. «Չէկէ չէկէ, ի՞նչ անեմ»։

Ասում ա. «Քունը լըցուէ յաչքերս»։

Ասում ա. «Որ քունը լցուէ յաչքերդ, ես ի՞նչ կանամ անի, ես դարիր, դու դարիր»։

Ասում ա. «Հացն ու գինին, Տէր կենդանին, մէ կոպալ կը զարկեմ կիջնես յանդունդքը»։

—Տէ, ասում ա, որ էնենց ա, կը պախեմ, մեղայ Աստծու։

Կոպալը կը տնկայ, կուլարը (թաղիկ) կը քաշայ վրէն որ պառկի քնի։ Ժամանակը կը գայ, Կիրակոսը կը գայ Դաւթին կը խանայ վեր, թէ հելի հորթերդ առ՝ գնա, մուրթն ա։ Հորթեր կը տայ յառէջը, կէթայ, պոչն ու ոտը կը բռնայ, կը տփայ էն մէկէլ հորթակայ վրէն։ Քեռի Թորոսը ճամբու վրայ պառկած կընի կասայ. «Դաւիթ ջան, էդ հը՞նչես անում, խըլգի հորթերը վերցնում ես տփում մէկէլ հորթի վրէն, խառեցնում»։

Ասում ա. «Քէֆս էկեր ա»։

—Հնչա՞ քէֆդ էկէ։

Ասում ա. «Մէ աղրէր Քլից էկեր ա իմ կուշտ»։

—Անունն ի՞նչ ա։

«Կիրակոս ա»։

Ասում ա. «Կոպալս տնկում եմ, կուլապս քաշում եմ վրէն, պառկում եմ տակը քընում եմ, ես վատէն չեմ գինում եմ, իմ ախպէր Կիրակոսը պախում ա հորթերը, գալըմ խանում ա ընձի վեր, էլ, քեռի Թորոս, դու մի գայ, ես կը պախեմ հորթերը»։ Էս խեռ ուրխնում ա քեռի Թորոսը։ Մէ վախտ Դաւիթը հորթերը տանում պախում ա։

Մէկ օր Կիրակոսը յետ հնկաւ, շատ յանքնցաւ։ Դաւիթն հերոստաւ, թէ քունս զօռում ա ընձի։ Էկաւ, որ Կիրակոսը գլոխ բաց գալըմ ա, «Ախպէր, ասաւ, հը՞նչ ես գլոխ բաց էկէ»։

Կիրակոսն ասում ա. «Յէսօր մեր գեղ սատման ժամ էր, խարիսայ են դրած, իշտա յետըցայ չտուին»։

Դաւիթ ասաւ. «Դու հորթերին մուղաթ կաց, ես էթամ խարիսէն բերեմ»։

Էտ մարդ հնկաւ ճամբախ գնաց։ Գնաց Քլից հէլաւ դուս. գնաց, որ ժամից հեղած են, որ գան նստին խարիսայ ուտեն։ Պառվըներ առած են եղը, խարիսէն ու խացը կանգնած են, որ լըցնեն՝ ուտեն։ Դաւիթն էկաւ պառուին գոշտեց, աղն ու եղը լցրեց խարիսի մէջ, կոպալը քցեց խառնեց, հանեց զարկեց կանթի մէջ, դըրեց թևին, խացն էլ զարկեց գոլթուղը, գնաց։ Պառաւը լացաւ, ղժղըժաց։ Էնտեղի մարդիկը ասին. «Թո տանայ, պէտքը չէ»։ Տարաւ խասցրեց Կիրակոսին։ Տեսաւ, Կիրակոս գլոխը տփում էր, լալում էր։ Խարցրեց՝ ասաւ. «Հնչի՞ ես լալըմ, Կիրակոս։ Ասաւ էս ա, խարիսէն բերեր եմ, հացը բերեր եմ, եղն ու աղն էլ մէջը»։

Ասաւ. «Իմ հորթերը տարած են»։

—Ո՞րը տարաւ։

«Քառասուն դև էկաւ, քառասուն հորթիկ գրկեց տարաւ։

Ասաւ. «Դո՞ր տարան»։

Ասաւ. «Էսենց տարան, ճամբախն էս ա»։

—Դէհ, ասաւ, կէ՛ չուր ես գամ։

Դաւիթն հէլաւ գնաց։ Տեսաւ մէ հէրի միջէն մուխ յելնում ա, գնաց տեսաւ որ ութ կանթանի զաղան դրած են էն օջախի վրէն, հորթերը մորթած են լցած են մէջը, քաշեց տարաւ դէն զաղանը, գլոխը, ոտները, կաշինը լցեց էդ զաղնի մէջ։ Մէկը մէջը կայներ էդ գևերի, կերակուր էր էփում, փախաւ դուս։ Դաւիթն էլ առաւ զաղանը հէլաւ դուս։ Ջուրը ճիրեց, տարաւ խելի զատըցրեց (հեռացրեց), ասաւ. «Խո էս մէ մարդը չի ուտում էս կայան (մեծ) հորթերը, որ փախաւ, էթամ տենամ մէնակ է՞տ ա, թէ չէ ուրիշ էլ կայ»։ Էդ մէ գևը գնաց իր հընկերտանքի կուշտը, գնաց ասաւ. «Ձեր տունը շինուի, մենք քառասուն հոգով դարտակ զաղանն ենք գնում օջախի վրէն, մէ ջահիլ տղայ էկաւ, հորթերը մէջն էր, ջուրը մէջն էր, գլոխը թալեց, ոտները թալեց, կաշին թալեց զաղնի մէջ, առաւ հէլաւ դուս»։ Գևերը հէրից դուս վազան, Դաւիթը էկաւ կոպալն առաւ կայնաւ էտոնց գլխին, մէյ մէկ զանեց սըպանեց։ Եռասուն ինն էլ սըպանեց, մնաց մէկը։ Էն մէկն էլ մտաւ ներսը զանեց սըպանեց։ Մտաւ հէրի մէջը, մտաւ տեսաւ խազինէն բոլ էր, յանկաջ ըսկի չարաւ, էկաւ զանեց յիրեք դուռ ջարդեց իրար վրայ, յիշկաց տեսաւ որ մէ քուռակ ներսը կապուկ ա։ Կոպալ թալեց ու բռնեց. Խաց ու գինին, Տէր կենդանին, վորը որ մոտրցաւ իմ քուռկին մէ կոպալ կը զասեմ։ Տեսաւ որ մարդ չկար։ Հէլաւ դուս, տարաւ էն ջանդրկներ հէրի յետև թալեց կուրցրեց. Էտոնց յանկճներ էլ քոքահան արաւ, բերեց լցեց մէ քարի տակ, յինքն յիրան միտք արաւ թէ քեռի Թորոսին տամ նշանց (ցոյց)։ Հէլաւ մէ ջոջ քար բերեց տուեց հէրի դէմը, կոպալը զանեց զազնի մէջ, դրեց թևին, բերեց հորթարածի կուշտը կացաւ։ Ասաւ.

Մի լա, հորթերդ բերեր եմ։

Ասաւ. Բա ո՞ւր ա, Դաւիթ, հորթերը։

Ասաւ, թէ էս ա լըցեր եմ զաղանը։

Ասաւ. Թող թըղ արածան։

Ասաւ. Ի՞նչպէստ թողեմ, կը փախնին։

Դու իմ հորթերին մուղաթ կաց, տանեմ տէրպէտէր անեմ։ Ասաւ գնաց «Արէք ձեր հորթերը տարէք», բռնաց, ճըչաց։

Ասին. Հո՞ւր ա մեր հորթերը։

Ասաւ. Հէս ա լըցեր եմ զաղանը։

Դաւթին ասին. Թող տենանք։

Ասաւ. Թողնեմ կը փախնեն, չեմ կանայ բռնի։ Էկէք, մէ մէ կոտ կորեկ հաչ կայ, տուէք իմ ախպօրը Կիրակոսին, որ տամ։

Ասին. Դի գեռին, կըտանք։

Որ չտուիք մէ կոտ կորեկի համար մէ գեղ կը քանդեմ։

Էտի կը գնայ ցածր։

Ասաւ. Բէ տենանք։

Դըրեց ցածր, տեհան, էփուկ ա, ասին, թէ դու էտ հը՞նչես արել մեր գլոխը, մեր հորթերը սըպաներ ես, լըցեր ես զաղանը։ Էփեր ես։

Էտ էլ ասում ա. Ես չեմ սպանել, դեն ա տարել, էս զաղանն էլ ձեր հորթկայ տեղը։

Դաւիթը ետ կը դառնայ կուգայ հորթերի կուշտը, կասայ. «Կիրակոս, գնա քո կորեկը ժողվայ, որ չեն տայ՝ ընձի ասա»։ Էտի կըգայ՝ հմէն մէկ մէկ կոտ կորեկ կը բերայ կտայ Կիրակոսին։ Դաւիթը հորթերը կը քցայ յըռէջ, որ տանայ Սասուն, պոչը ու ոտը կը բռնայ կը տփայ էն մէկէլ հորթկայ վրէն։ Քեռի Թորոսը կը գայ յառէջը կասայ. Խալխի հորթերը դու խատրցրիր, էտ ի՞նչ ես անում ես։

Դաւիթը կը վեկալայ կասայ. «Հացն ու գինին, Տէր կենդանին, սուս մացա, կը զանեմ կիջնես յանդուդքը»։ Եռասուն հորթկանից կը մնայ տասնըհինգ հորթիկ. կընանիք լալով կեթան իրանց հորթերը կը բերեն։

Դաւիթը կասայ. «Քեռի Թորոս, որցեղէն մարդ ու որցեղէն տաւաը դուս չթողես, որ տանեմ խեռս»։

Էդ գեղի մարդիկ կը գան գըյնին քեռի Թորոսի ոտը, թէ մեղի կը տանայ կը փէնացընայ, ազատա մեղի էտու ձեռէն։

Քեռի Թորոս կասայ. «Արխային մացէք, ես ձեր խեռ եմ»։

Եղնեբը կը ջըլեն (ջուլ ձգել վերան), Դաւիթը կըհնդնի յաւեջ, քեռի Թորոս կընկնի եղնեբի յետուը, գեղականն էլ քեռի Թորոսի յետուը։ Հէլան գացին հէրը. մտան հէրի մէջ՝ ասաւ. «Քեռի Թորոս, էս խազինէն տենում ես, ինչքան քու դուվաթը կը յաղթայ, վեկալ, ինչ կը ինայ՝ քասիբ քիւսուբի վրայ բաժին արա»։ Ցինքը հէլաւ գնաց քուռկի կուշտը, ասաւ. «Հացն ու գինին, Տէր կենդանին, քեռի Թորոս, որ իմ քուռկին մօտցար, մէ կոպալ կը զանեմ կիլինես յանդունդը»։

Էն մախլուխը ինչ խեռն էր էկած, փախաւ։ Քեռի Թորոսն հէլաւ տեսաւ, որ էդոնք փախան, ասաւ. Հընչ էք փախնում։

Ասին. Էս ջանդկներ որ սըպաներ ա, մեզ էլ կը բերայ խառնայ էտոնց խեռ սպանայ։

Էն էլ ասաւ. Արխային մացէք, էս խազինի տէրն ա։ Մըտաւ ներս, Դաւիթին ասաւ. Դաւիթ ջան։

Ասաւ. Ի՞նչ ա։

Ասաւ. Քո ազգին դակմա ձի չի գիմանայ, ասաւ, քո պապի ձին էլի Աստծու տուած էր, անուն Քուռկէջալակ էր, էնի տուեր եմ քո քեռուն փէշքէշ։

—Բա ինչ ես ասում, քեռի Թորոս։

Ասում ա. Ձեռդ ճխտա քամկի վրէն, թէ ազգաւ՝ տու քասիբ քիւսիբ թըղ տանեն, Աստուած քեզի կը խաստնայ։

Ձեռը ճըխտեց վըրէն, ոտները թալեց հէրի կըտուրը։ Գնաց ձեռները ճըխտեց էն մէկէլ ձին՝ չը ազգաւ։ Դէհ ասաւ, քաշայ է-թանք։ Քաշեց, բեռները բռնեց, էկան յիրանց տուն։ Հորթերի թարկը աբեց։ Էկաւ մէ այեար ասաւ, մէ գեամ ասաւ, սէրը քցեց ձիու վրէն։ Մէ ձեռացաղուշ ասաւ, կոպալ զանեց մէջքը, գնաց յիր համար աւ անելու մէշէքը։ Իրիկուան քեռի Թորոսը խազալով էկաւ յառէջը, ձիան դիկկինը բռնեց, Դաւիթն յիջաւ։ Էրեռները պաչեց. «Կեցէ իմ Դաւիթ», ասաւ, «ընձի աւ ես բերէ»։ Էս խեռ բերեց լոգցրեց, ասաւ ծոցը պառկաւ։ Մէ աս ժամանակ էտենց արաւ։ Մէկ աւոր մէկ օր Դաւիթը հէլաւ գնաց աւ անելու. տեսաւ մէ պառաւ մէկ մշակ ա բըռնէ հանդը ջրում ա։ Արևը բանցրցաւ. Դաւիթը էկաւ, ջրուորի կշտէն մէ լոր թռաւ, բռնեց, մէկ էլ թռաւ, էն էլ բռնեց, խէլի հնցաւ՝ մէկ էլ բռնեց. հէլաւ

պըտըտեց էտ արտի մէջը ձիով. ցեխ արտ՝ յըմմէն քոքախան արաւ։

Էտ ջըրուորն ասաւ. Էսի ֆըլան (այս ինչ) պառուի արտն ա, յիրեք եթում (որը) ունի, էս մէկ արտն ա, մեղք ա, դուրս յարի։

Էն էլ ասաւ. Հացն ու գինին, Տէր կենդանին, կը զանեմ կիլինես յանդունդը, թող իմ քեռի Թորոսին աւ տանեմ։

Էտ էլ բախը դրեց թևին ու յետ դարձաւ։ Պառաւը հաց առաւ, էկաւ էտ ջրուորին ասաստ, ասաց. «Գորան (վայրենի) հընչի դարձար էկար»։

Ասաւ. Դաւիթը սըմբուլներ (կռուիթ, հասկ) խանեց երկինքը։

Ասաւ. Դեհ հացդ կէ, ես էթում եմ Դաւթի կուշտը։ Պառաւն էկաւ Դաւթի կուշտը, ասաւ. Շնողուորը տփեմ վրէդ, էդ հինչ ես անում. իմ կորեկի սըմբուլները խաներ ես երկինք։

Ասաւ. Պառաւ, սուս՝ կը զանեմ կիլինես յանդունդը։

Ասաւ. Որ զոչաղ տղամարդ ես, ջոջ Մհերի թոռն ես, Աբամելիքի տղէն ես, ջոջ Մհերը գնաց Թուրքման աւերից, էլը բերեց, մկայ դու իշտա զոչաղութուն ես անում. Մարամելիքը անիծեց քու խէրիկ, մէրիկը, տարաւ Թուրքման էլը, տարաւ մամիկդ, տարաւ խազինէն, տարաւ Քուռկէջալաթը։ Ղողբէկն էկաւ ձեր վեց աթոլորը տարաւ եսիր, տարաւ քեռուդ տուած էլը, (ժողովուրդ) տարաւ դրեց Արաբատունը, տարաւ ձեր խազինէն, էկեր ես իմ ճնճուղներն ես թոցնում։

Էկաւ պառուի կուշտը ճչաց, պառուի ուշքը գնաց։ Ասաւ. Իմալ ընձի ասեցիր՝ քեռի Թորոսին էլ ասա։ Թալեց ձիան թարքը, տարաւ։

Քեռի Թորոս պառկուկ էր ճամբի վրէն։ Դաւիթը ձինը լցեց սրտի քըրէն (բարկութիւնից)։ Քեռի Թորոս յիշկեց տեսաւ, որ ոչ երկինքն ա, ոչ գետինք, էնպէս ա գալում ա, յինքը փախաւ մըտաւ մէշէքի մէջ, կոպալը քաշեց թալեց յետուը որ սպանայ, յինքը ճամբով գնաց, քեռի Թորոսը ծառերի մըջով։ Գացին տունը։ Դաւիթը տփեց պառուին գետինը, ասաւ. Դէ պառաւ, խօսայ։ Տեսաւ պառաւ մեռուկ ա, դարցաւ ասաւ Թորոսին. Քովակ, ասաւ, հնչի ընձի ղրկում ես աւի, չես ղրկում քո դուշմնին։

Քեռի Թորոսն ասում ա. Քե հընչի խամար եմ պախում, դիւշմի խամար, համա հլա ջահիլ ես։

Դաւիթն ասում ա, թէ ջահիլ մահիլ ես չեմ գինայ, ես պտի ձիուց չիջնեմ, էթամ։

Ասաւ. Էտենց էթաս։

Ասաւ. Բա ինչ էթամ։

Ասաւ. Քո պապի թագը, գիւրզը, քամարը, համայիլը Մարութեանի Մայրամ Աստուածածինն ա, եփօր տասը հատ անծին երինջ տանես մատղես, գահանով, էլիկով պատարագ անես, դուռը բացուի, թագը դնես գլխդ, գիւրզը առնես ձեռդ, համայիլը դնես ծոցդ՝ նոր էթաս կռիւ։

Դաւիթ տփեց աղբըրտանքին, խանեց աընից, քեռի Թորոսին կայնեցրեց դռան դէմը, փաչէն ճղեց, մէ ճանկ աղ լցեց, որ մոմռայ, չքնի չունք լուսը բացուի։

Լուսը որ բացուաւ, բերեց լուաց, բերին դեղ թալին կապին, հէլան գահանէքը, էրինջները, ժողովուրդը առան գացին էնտեղը, յիրանց մատաղը արին. թագը դրեց գլխը, գիւրզն առաւ ձեռը, համայիլը դրեց ծոցը, Քիւրկէջալաթը խէծաւ, (իր պապու ձիու անունը դրէ իր ձիան վրէն)։ Ուզեց ճամբախ հընկնի։ Քեռի Թորոսը դանչեց, ասաւ. «Դաւիթ ջան, արի հաց կէ, յետի գնա»։

Ասաւ. Անուն հաց իմ փորը չի մանի, չունք իմ դուշմնի գլխ կտրեմ։ Դարձան էկան շահարի մէջը։ Դաւիթը եռսուն տանը դանչեց, հալալամիշ հէլաւ, ասաց. «Էթալը իմ ձեռը, գալը Աստծու ձեռը»։ Դարձաւ քեռի Թորոսին ասաւ. «Քեռի Թորոս, ընձի ճամբախը նշանց տու ես էթամ»։ Քեռի Թորոսը հէլաւ մէ ձի խեծաւ, ասաւ. «Գնանք, ճամբախը նշանց տամ»։ Հէլան հընկան ճանբախը։ Գացին հասան կապուտկողը, ասաւ. «Դաւիթ ջան, մեր խին վաթանը էս ա, լաւ տեղ ա, վատ տեղ չի»։

—Բա դուք հը՞նչ էք գացէ Սասուն։

Ասաւ. «Մսրամէլիքի ահուն ենք փախէ»։

Գացին Ղըլաթն էլ ընցան։ Դաւիթ տեսաւ որ քեռի Թորոսի ձինը իր ձիան խետ չի քելում, ասում ա. Քեռի Թորոս, քշ։

Ասում ա. «Ձինս չի էթում ա»։

Ասաւ. «Ընձի ճամբախ նըշանց տու, դու ետ դարձի, ես էթամ»։ Միտք արաւ քեռի Թորոսը, ասաւ. Ղրկեմ Մըսրը վայթը Մսրամէլիք Դաւթին սպանայ, ջահիլ ազայ ա։ Ասաւ. Դաւիթ ջան, դու գաս էթաս Արաբատուն։

Ասաւ. «Հընչի՞»։

Ասաւ. «Էրկու հազար տուն էլ Արաբատուն ա, գնա քշայ առ արի։ Արաբատունը մէ էլ-աղասի (ժողովրդի պետ) կայ, գեղից էրկու վերստ զատն ա, սիպտակ չատրն էլ զանուկ ա, մէջը մտուկ ա, ոսկէ խնձորը գլխն ա, թէ կառցաբ էլը ետ դարձու, առ արի։

Դաւիթը գնաց տեսաւ էլը էտեղն ա։ Բարև տուեց էլ-աղասուն՝ բարև ձեզի։ Էն սնաթին, ազաթ կար, ձիան գլխ հէլան բըռնին։ Էտի ձիանից յիջաւ, բերին խալին քցին, մինտարը թալին, բարձերը քցին, էտի էկաւ նստաւ։

Էլ-աղասին խարցրեց յո՞ւստ ես։

Թէ Սասունայ եմ։

Վի՞ր ազգէն ես։

Վերցրեց թէ Պապ թագաւորի ազգէն եմ, Աբամէլիքի ազէն եմ։

Այ ես քե զուրբան հընեմ, դու Դաւի՞թն ես։

Թէ հա, ես Դաւիթն եմ, Աբամէլիքի տղայ Դաւիթը։

Էտուր խաց, փունչ պատրաստին, էտիկ խաց կերաւ, քնլաւ։ Էտ էլ-աղասին մարդ ղրկեց ղանչեց էլիկին, ասաւ. Էլիկ, ասաւ, էսի Դաւիթն ա, մեր թագաւորի տղէն ա, Մսրամէլիքը էկաւ էստոնց յեսիր արաւ տարաւ, մկայ քեսարըցէ էկէ մեր կուշտը, անմէնքս մէ զատ ընծայ տանք, որ տանայ լիանայ»։ Հէլան անմենքը տաւար տուին, քէչա տուին, ոչխար տուին, բերին էլ-աղասու դռան դէմը կոլոնին։ Դաւիթը քնուց վեր հէլաւ, իրրուին ու լականը բերին լուացուաւ, հէլաւ գընաց դրեց ձին։ Գնաց դարձաւ էկաւ, ասաւ. «Աղա, էս ինչքան ապրանք էք բերէ էստէ կոլոներ էք»։

—Թէ քեզի ընծայ ենք բերէ։

«Ի՞մալ թէ ընծայ էք բերէ»։

—Շատ ա՝ շատ դարուլ արա, քիչ ա՝ էլի շատ դարուլ արա, աղքատ մարդիկ ենք, սրփթա (նախ) քանդըվեր ենք Բաղդըդայ էկեր ենք Սասունը, Սասունայ էլ Մսրամէլիք բերէ էստեղը։ Խնդրում ենք քչով շատընաս։

Դաւիթը կասայ. «Բարցէք, ես էկեր եմ ձեզի տանեմ»։

Էտոնք շատ կաղաչեն, թէ քանդում ենք. Ջահիլները կայնում են որ չիգան։

Դաւիթը կասայ. «Հացն ու գինին, Տէր կենդանին, հըմմենիտէլ կը ջարդեմ, իմ էլիկն էք, թէզ էրէք, էթանք»։

Էտոնց ջոջերը կը կայնին կասեն, որ էտի զոչաղ տղամարդ չէրնի, Մսրամէլիքի ձեռնէն մեզի չի տանայ։

Էլիկը քաշեց, առաւ էկաւ Սասուն։ Ճամբին, մէ տասը պառաւ նեղանում են, նըստում են յաղբրի վրայ, Դաւիթը էլիկը քաշում բերում ա տուն։ Քեռի Թորոսը տէրբէտէր ա անում ա, նստըցնում ա անմէնքը յիրա տան մէջը։ Քամակից Մսրամէլիքը մէ հազար ձիաւորով Ղոզբէկին ղրկում ա, որ էլը ետ դարձնայ, Դաւթին սպանայ։

Ղոզբէկը էկաւ, յաղբրի վրէն նստուկ պառվներին բարև տուեց։ Պառվներն ասին. Դի՞ր ես էթում, Ղոզբէկ։

Ասաւ.

Էթում եմ Սասուն ու բան,
Խարս ու աղջիկ բերում եմ արմաղան,

Կարճ կարճ կնանիքը տախտ աւլեն,
Էրկէն էրկէն կնանիքը գէօվընտ քաշեն (պարեն),
Կարմիր եղներ լծի,
Կարմիր կովեր կթի։

Խէր հընի, Ղոզբէկ, գնա, ասին պառվընները, ու նստան տեղերը, ասին էլ ինչ էթանք, Ղոզբէկը մկայ Դաւթին կը սպանայ, էլը յետ կը դառցնայ։

Գնաց Ղոզբէկի զոշունը կռիւ արաւ խըտ Դաւթին։ Էտ վախտը քեռի Թորոսը հէլաւ ծիլ պալի (քարափ) գլոխը, Դաւթի կռիւը չէր տեսէ, յիրիշկաց տեհաւ հինչ որ հացի պէս գերնդին առնեն բրդեն, Դաւիթն էլ զոշունը բրդում ա, փառք տուեց Աստծուն։ Ղոշունը խլըսաւ, Ղոզբէկն ու Դաւիթը առան յիրար։

Քեռի Թորոսը ասաւ. «Դաւիթ, Ղոզբէկը փախաւ, ձիան պոչը բռնա»։ Դաւիթը ձիան պոչը բռնեց՝ քոքահան էլաւ. Ղոզբէկին վէկալեց ձիան խետ տփեց գետինը, ոտը դրեց փորինը, մէ ձեռնով բերանը ճխտեց բացեց, լեզուն քաշեց քոքահան արաւ, ատըմներ քաշեց շարեց ճակատը, եռսունվերկու ատամը, վեկալեց դրեց ձիան վրէն, ասաւ. Գնա Մսրամէլիքին խաբար տար։

Ղոզբէկը հէլաւ գնաց, էլի պառվընեռն յըռատ էկաւ, ամչցաւ, եան տուեց պառվընեռից։ Պառվընների մէկը վազէ վազ գնաց Ղոզբէկի յառէջը, ասաւ. Խէր ըլի, Ղոզբէկ, գոր ես էթում։

Հընչի գացիր գէլ ու գազան,
Դարձար էկար քընց շուն վազան,
Բերնէդ կէթայ չորթնի թան։
Գլոխդ գոմշի ա,
Ցանկճներդ իշի ա,
Ոտներդ դէաւի ա,
Պոչդ ջորու ա [1])։

Ղոզբէկ չկրցաւ ջուզար (պատասխան) տար։

Պառվըներ յետ դարձան գացին Սասուն, Ղոզբէկ գնաց Մսըր։ Գնաց թուղթը գրեց, չկարցաւ լեզուով ջուզաբ տար, լեզուն կտրուկ էր. թուղթը տուեց աղրօրը, յիրիշկաց տեսաւ թէ գրուկ ա ես Մսրամէլիքի փէսէն եմ, ամօթու չեմ էթայ էնդու էրես, ընձի պախէք, ասէք Ղոզբէկը սպանուեր ա, ձինը էկեր ա։ Գացին ասեցին, քաշին ձինը տարան. ասաւ, ա՛յ հայ, էս ինչ բան ա, ձիան պոչն ա խետը կերեր ա։ Բա Ղոզբէկն ի՞նչ ա հէլէ։ Թէ չկայ։ Վեկալում ա Մսրամէլիքը ասում ա, թէ սուտ ա, տունն ա, ասէք դայ։ Առնում են էթում են, որ ատրմները շարուկ ա ճակատը։ Մսրամէլիք զանչում ա իրան մօրը թէ արի տես։ Մէրն ասում ա, թէ ես ի՞նչ անեմ։ Վեկալում ա ասում ա. Էս քո արածն ա, էն վախտն որ թողիր Դաւիթը սպանի, էս օր էս բանը իմ գլոխը չէր խանէ։ Էս խետ ամմէն թագաւորից զոշուն կուզեմ, կէթամ Դաւթի վրայ կռիւ։

Մէրն ասում ա. Ձեռ վեկալա, մի գնա։

—Էրա՞ իմալ անեմ որ չէթամ։ Ձէթամ կը գայ ընձի կը բրթայ։

Էտի թող զոշուն դրստայ, գանք գըխ Դաւիթը։

Դաւիթը Ցռան Վէթօին արաւ թագաւոր, յինքը ձինը խէձաւ գնաց աւ անելու։ Մսրամէլիքը վեկալեց զոշունը էկաւ, Սասնայ չորս բոլորը բռնեց կայնաւ։ Էկաւ ութանասուն ջան յղրկեց Դաւթի կուշտը, ասաւ. Դացէք տասը հարս ու աղջիկ բերէք, խինդը իմ ոտները մաժայ, խինդն էլ էրեսիս ճանճերը քշայ։ Կոտը տուեց թէ տասէն մէկ բայրա առէք ոսկի։

—Էտի, խարցրին, ի՞նչ մասի ա։

—Որ վախենայ՝ կը տայ, որ չվախենայ՝ չիտայ։

Էկան էտ ութանասուն ջանը Ցռան Վէթօին թէ մեր թագաւորն ասում ա տասէն մէկ բահրայ տայ։ Ցասը խարս ու աղջիկ տայ, խինդն էրեսիս ճանճերը քշայ, խինդն էլ ոտներս մաժայ։

Ցռան Վէթօն տաս խատ հարս ու աղջիկ բերեց, խաղնի (գանձի) դուռը բացեց, որ մտնեն մէջ, կոտը առաւ որ ոսկին չափէր։ Դաւիթը գալում ա որ մտնի շահարը (քաղաքը) տեսաւ որ շահարի չորս բոլորը շատ չրաղ ա, կրակ ա վառում, երկուղ արաւ, ասաւ՝ էս ինչ ա բռնած իմ վրէն։ Էկաւ ձինը տուեց քեռի Թորոսին, էկաւ մտաւ ներս, խաղնի դուռը տեսաւ բաց ա, յիմացաւ թէ խաղնէն թալնում են, բոռաց ճչաց։ Բոռալու քիմին (պէս) Վէթօն կպաւ յառաքից, հնկաւ գետին, ուշքը գնաց։ Էկաւ Վէթօին վեկալեց շպրտեց դուս, խարցրեց էտ մախլուխին. Դուք հը՞նչ էք էկէ։

Ասին թէ էկեր ենք տասին մէկ բահրա տանենք Մսրամէլիքին, տաս էլ խարս ու աղջիկ։

Ցռան Վէթօն ուշքի էկաւ, ասաւ, Դաւիթ, գո՞ւ իր։

Ասաւ. Հրամանք ա քեզ, ես ի, թագաւոր։

Նոր էտի ասաւ. Փորս գնաց վրէս։

Գնա լուացուի, լոդկցի, Ցռան Վէթօ։

---

[1]) Վարիանտ.—Քիւզաճիում Յարութիւնը պատմում էր, թէ Ղոզբէկը պատասխանեց.

Սասունայ բոլոր քար ու կապան,
Մարդմ՝ է էլէ գազանական.
Դրբի մը կը քցայ խազարական,
Գացէք սպանուողների պլորանք բերէք
Ձեզի էրէք եղ ու չորթան։

Դաւիթը գնաց զանեց կոտի ոսը քցեց, տեսաւ անոռ ա, գնա չպտի կայնի մէջը, չափեց, տասը չափեց, ասաւ. Ջվալը բերէք մէկ էլ լցեմ ձեզի՝ տարէք։

Չափեց ասաւ՝ բոլ ա։

Ասին. Զատ կնայ մէջն որ բոլ հլնի։

Ութանասուն Ջանն էլ զանչեց խանեց դուս. որ խանեց բերեց բերդի կուշտը կայնըցրեց, խինգանասուն (յիսուն) Ջանը մէկ մէկ թալեց բերդի էն եանը (կողմը) ցխեց (սպանեց), ճնաց եասուն Ջանը, տասի զոլթուզի տակը ծակեց, թևերը քցեց մէջը, տասի էլ մէ մէ թևը կտրեց, մէկ մէկ թողեց, տասի էլ մէկ մէկ յաչքը խանեց, մէկ մէկ թողեց։ Դէհ գացէք խաբար տարէք Մսրամէլիքին։ Էտ եասուն Ջանը հելան խաբար տարան։ Մսրամէլիք էտ եասունին խաբցրեց. Յուր ա ձեր մախլուխը։ Էտոնք գանգատուոր հելան։ Ասին թէ էն վախտը դրկիր կուռի մէջ, մենք էս դատը չինք ջարդուէ, խինգանասուն Ջանը բերդից թալէ Ջարդեր ա, տասը Ջանիս թևերը կտրեր ա։ Տասը Ջանիս յաչքերը խաներ ա, տասը Ջանիս էլ զոլթուզները ծակէ թևերը քցեր ա մէջը։ Հէլաւ Մսրամէլիք կայնաւ զոշունի մէջը, տասնըվինդ խազար Ջան ա, հա զուրբան ձեզի որ Դաւթին բրդէք։ Ջանք-գոլին (թմբուկ) զարկին. մտան մեյտանը։ Քեռի Թորոսն առաւ Դաւիթը հելաւ դարի գլոխը։

Քեռի Թորոսին Դաւիթն ասաւ. Էս ինչ արիր իմ գլոխը։

Ասաւ. «Հնչի»։

Ասաւ. Էն վախտը որ դրկում իր Արաբսասուն, կեթի Մսրը, էսքան մախլուխ չէրգի իմ վրէն։

Զոշ Մսերայ թոռը չես եմալ ա, Դաւիթ, Արամէլիքայ ա տղէն չես. ասաւ քեռի Թորոս, երկուղ ես անում։

Ասաւ. «Բա չեմ անում էստա մախլուխի մէջը»։

Քեռի Թորոս վազաւ մէ ծառ քոքախան արաւ, դրեց թևին՝ առաւ էկաւ ասաւ. «Լաւ մարդ եմ, Դաւիթ Ջան»։

—Բա, ասաւ, փիս մարդ ես, մէ ծառ քոքախան արիր։

Ասաւ. «Բազի մարդ կայ յինքն ոըժբար ա, էթում ա արաը քաղում ա, բերում ա լցում ա կալը, հմէն հափը թալում վրէն, կալ քշողը մտնում ա մէջը ջարդում ա, ասում ա, Բուռկէջալաթ քու տակն ա, համայիլը քո ծոցն ա, խրեղէն թուրը ղրսֆիղաւ քո ձեռն ա, դանչա Մարութենի Մայրամ Աստուածածին, հափները ես կըտամ վրայ ծառով, դու էլ բըրդա։

Երեք օր կռիւ արաւ, գիշեր ու ցերեկ։ Քեռի Թորոսը հասը չթողեց, տուեց վրէն, Դաւիթը դանչեց Մարութենի Մայրամ Աստուածածին, համբնին բրդեց։ Ջուն ոտները չունք չոքերը

արնի մէջ մտաւ։ Մսրամէլիք ընդոնց խետ էկաւ, Դաւթի խետ կռիւ արաւ, յիրեք օր էլ էտ կռիւ արաւ՝ հէլաւ վեց օր։ Զաղդում Դաւթին, լափով (խորամանկութեամբ) ա կռիւ անում. ասում ա. Վեց օր որ թմբմաւ, դու գնա քո տունը, ես էլ էթամ իմ չատրրը, դինչանամ։

Էն ինչ Դաւիթն ա՝ խաղալով էթում ա յիր տունը, ձինը քեռի Թորոսը բռնել գեամը տանում ա։ Էն ինչ Մսրամէլիքն ա՝ միտք ա անում ա, գալում մօրն ասում ա. Մէրիկ, ես չեմ կանում Դաւթի վրէն, զոշունը բիրդան բրդեց։

Մէրն ասաւ. Վէկալա ընձի առ գնա Մըսրը։

Ասաւ. «Իմալ էթամ. երկրի մէջ չեմ կանայ ապրի, աշխարհքը բրդեր եմ. յառաւօտ չունք կէսօրին կռիւ կանեմ, կէսօրնէ յետ կը կայնըցնեմ, կասեմ դու չոքի ես զանեմ, ես չոքեմ դու զան։ Զան շիրին ա, նա էն (ոչ նա) կը չոքի, նա (ոչ) ես։ Քեռի Թորոս խելքով մարդ ա, խղճով մարդ ա, քեռի Թորոսին կէթամ կասեմ. Ես չոքեմ թէ Դաւիթը չոքի։ Խիղճով մարդ ա, գինում ա ես ծեր մարդ եմ, կասայ, Դաւիթ, դու չոքի։ Դաւիթ, չոքաւ՝ Դաւթին կսրպանեմ, քեռի Թորոսին էլ կսրպանեմ, Հայաստուն կը կտրեմ, վեկալեմ մէրս էթամ»։

Յառաւօտն էկան մտան մեյտան (ասպարէզ), Դաւիթն ու Մըսրամէլիք չունք կէսօրին կռիւ արին, կէսօրն յետ Մսրամէլիք ասաւ Դաւթին. Ես չոքեմ դու զան, դու էլ չոքի ես զանեմ։ Նա (ոչ) էն չոքաւ, նա էն։ Քեռի Թորոսը էնտէ կայնուկ էր։ Մսրամէլիք գնաց քեռի Թորոսի կուշտը, ասաւ. Քեռի Թորոս, վերև Աստուած, ներքև դու, դիւզ դատաստան դու դի, ես չոքեմ Դաւիթ զանայ, թէ Դաւիթ չոքի՝ ես զանեմ։

Քեռի Թորոս միտք արաւ, ասաւ. Մսրամէլիքը ջոզ ա, Աստուած զարուլ չի անայ, թօ Դաւիթը չոքի։

Դաւիթը չոքում ա, Մսրամէլիք զոլանը (փորքաշ) պնդում ա, մէ վերստ ճամբաս էթում ա, որ լցայ ձինը գայ զանայ։ Քեռի Թորոսը ասում ա. «Դաւիթ Ջան, համայիլը պարդա դի ճակտիդ»։

Ձինը գետինը քանդում ա։ Մըսրամէլիք գալում ա՝ դարրը (թուրը) թալում ա, Դաւիթ վեր ա թըռնում, ասում ա. «Ցարի դու չոքի, էս խետ իմ դորն (հերթ) ա, ես պտի գամ»։

Մսրամէլիքն ասում ա. Մանկան (երևի՝ օրէնքը, ադաթը) յիրեք ա, հըլա էրկու խետ էլ թալելու եմ։

Էրկու խետ էլ էկաւ թալեց։ Դաւիթ հելաւ կանաւ։ Մսրամէլիքի մէրն հնկաւ Դաւթի ոտը. «Քեզի վեց ամիս պախեր եմ, խնայա»։

Վեկալեց Դաւիթը ասեց. «Մէ դարը բաղի քո պախելուն,

մէկ էլ բաղի Աստծուն, մէկ էլ զրկերտալէն էն հրեշտակը յիշնի կը թալեմ իմ դարբը, չեմ խնայի։ Ասաւ. Ինչքան խանի (մարդու) ջանդակ (դի) կայ բէ կոլոնայ տղիդ վրէն, դարբս կը թալեմ, բռնեց բռնեց, չբռնեց չբռնեց։

Բերեց ինչքան խանի ու ձիան ջանդակ կար կոլոնեց Մսրամէլիքի վրէն, դառնաւ մէ դար։ Դաւիթը դանչեց Մարուքենի Մայրամ Աստուածածին, թուրը թալեց, քեռի Թորոս ուզում էր ձեռը տէր դէմը, ասաւ. Հը՞նչ ես ձեռը տալըմ դէմը։

Ասաւ, թէ ես ուզում եմ, որ ես գլխի եանէն կայնես, ես ոտների եանէն, որ թուրը թալես՝ կիսես, քըցեմ զափան (կշիռ), տէնամ բարը կը գայ քո զոչադութունը։

Ասաւ. «Ես էսքան ջանդրկի վրայ ի՞մալ թալեմ որ կտրեմ կիսեմ»։

Ասաւ. «Քո տղամարդութենդ նոր եմ ջոքում, որ թալես կիսես՝ նոր զոչաղ տղամարդ ես»։

Դաւիթը թուրը թալեց՝ կիսեց. բերին քցին կշեռքը՝ բարեմբար դուս էկաւ։ Քեռի Թորոսը խասաւ Դաւթի հէրեսը պաչեց կեցէ իմ թոռը։ Հէլան առան Մսրամէլիքի մէրն էկան յիրանց տունը. մէկ առ ժամանակ պախեցին, մէկ չորս տարի պախեցին, օրերի մէկը Մսրամէլիքի մէրը վեկալեց ասաւ, թէ Դաւիթ, ընձի որ լաւութեն անես, Մըսրը կը տանես, ես չեմ կանայ էստե հայի մէջ թափ անի (դիմանայ)։

Քեռի Թորոսն ասաւ, թէ Դաւիթ, դու մի տար, մարդ կըզընեմ խեսը թո էթայ։

Ասաւ. «Զընի, ասաւ, ես կէթամ»։

Ասաւ. «Ի՞մալ էթաս, ընդեղի ջուրը զորեղ ա էստեղի վրայ, քեզի կը վնասէն, Աստուծայ ճրագը կ՚հնգնի։ Ես Կապուտկող մացեր եմ, Կապուտկողայ բլոճն ալ կոտշով ա, ես չեմ ուզի էթաս էնտե վնասուես»։

—Խացն ու գինին, Տէր կենդանին կէթամ, ես յօրթում եմ կերէ որ տանեմ Մսրամէլիքի մօրը պախեմ, տղին սպաներ եմ՝ պախող չկայ։

Հելաւ քեռի Թորոսի խեսը խալալամիշ հէլաւ, աղբրատանքի խեսը խալալամիշ հէլաւ, էլլիկին զանչեց խալալամիշ հէլաւ խեսը, թէ մացէք բարով, ես էթում եմ։ Մէ ձի Մսրամէլիքի մէրը խեձաւ, Դաւիթն էլ յիր ձինը խեձաւ, գնաց Մսրը դուս էկաւ։

Մսրամէլիքի մէրը ասաւ. «Դաւիթ, դո՞ր ես էթում, Մսրը նստի թագաւորութուն արա, Վանը, Կաղզուանը, Կապուտկողը ճնայ քո ձեռը, Սասունն էլ թո ճնա Ցոան Վէթօին»։

Դաւիթը ռաղի հէլաւ, նստաւ թագաւոր։

Էս վախտ Աբաս Միրզէն էլ Կաղզուան էր թագաւոր, մէ աղջիկ ունէր անունը Խանդուզ խանըմ էր. յիրարուց բեխաբար, Լօռու Համզէն եկեր էր որ Խանդուզ խանըմին ուզէր իր տղի խատար. Շապկով Խորասանին էլ էր էկէ ուզընկան։ Լօռու Համզու պուունկը կախուել էր գոշի վրէն, էնենց բէտ մարդ էր, Շապկով Խորասանին էլ յաչքի թարթրվներ չանկըլով քաշեր էր յետեը կապեր էր պուռնուռակի (ծոծրակի) վրէն։ Էկան էրկուսով էլ հանդըպան յիրար, ճամբի մէջ տեղը, Լօռայ Համզէն, Շապկով Խորասանին։ Յիրար բարև տուին։ Լօռայ Համզէն Շապկով Խորասանին ասաւ. «Դո՞ր ես էթում, թագաւոր»։

Ասաւ. Էթում եմ Կաղզուանը։

—Հը՞նչ ես էթում Կաղզուանը։

—Ապաս Միրզի աղջիկը ուզեմ իմ տղին։

—Թէ ես էլ եմ էթում։

Յիրանց յիրանց խօսում են, ասում են, որ մէկիս թալախը (բաղդ) կտրեց, թող ընդուն տայ։ Էկան էդ մարդի տունը։ Ջեռ տուին յիրար. Թամանդա (ծանօթացան) հէլան յիրար խեսը։ Տեղ տուեց էրկու թագաւորն էլ նստան։

Խարցրեց թէ թագաւորներ հ՞ընչ էք էկէ։

—Ջե՞ս յիմանում թէ հը՞նչ ենք էկէ։

—Թէ չէ։

Լօռայ Համզէն ասաւ. «Էկել եմ քո աղջիկը ուզելու իմ տղին»։

Էն էլ ասըմ ա. «Մէկը կայ, էրկուսն հը՞նչ ա էկեր ա»։

Ասըմ ա. «Յիրարուց բեխաբար ենք էկէ. ճամբէն էկեր ենք առեր ենք յիրար»։

Ասըմ ա. «Թագաւորներ, գլխներիդ զուրբան, էսի աղջկայ բանն ա, որ մէկիդ տղին կառնի թո առնի, ես չեմ կանայ ձեզի ջոկի, ջուխտրդ էլ թագաւոր էք»։

Շապկով Խորասանին ասըմ ա, թէ մենք խնդրում ենք, քո աղջիկդ գայ կայնի մեր կուշտը, որ մէկիս տղին առնի՝ առնի։

Զանչեցին բերին Խանդուզ խանումինը, խարցրին, թէ Խանդուզ խանըմ, որ մէկի տղին կառնես։

Ասաւ. «Նա (ոչ) Էդու տղին կառնեմ, նա Էնդու տղին կառնեմ»։

—Ընչի՞ չես առնում։

—Ասաւ. Էրկու թագաւորը ես չեմ կարայ յիրարուց ճխտի, ես մէ աղջիկ եմ, մէկի կառնեմ, նա (ոչ) Լօռայ Համզէն յըռըկի (խռովի), նա Շապկով Խորասանին յըռըկի։ Ասըմ ա, էրկուսի մանեիքն էլ թո դնեն իմ կուշտը, էրկուսն էլ էթան զոշուն բերին,

դան հօրս իւրտի մէջը կռիւ անեն, որ մէկը յաղթ հէլաւ, ես էնդու տղին առնեմ։

Էտունք հէնում են, թողում են էթում են։ Մէ աւ ժամանակ մընում ա. մէ ձէն ա գալում ա Խանդուդ խանըմին, Սասունայ Դաւիթ անուոր, քսան տարեկան տղայ Մսրամէլիքին սըպաներ ա, շատ զօչաղ տըղայ ա։ Աղջկայ միտքը փոխուում ա, ասում ա, «լաւն էն ա որ ես ընդուն խաբար անեմ գայ ընձի առնի, էն ա ընձի արժանի։ Խանդուդ խանըմի խինգ գաղ լէնքն ա, տասն էլ յերկէնքն ա։ Հելաւ յիր շաքիլքը քաշեց, ասաւ՝ վորը տանայ Սասուն տայ Դաւթին, յիր քաշով ոսկի կըտամ։ Տուրուս (սիրտ) անող չկայ որ էթայ, երկուղ են անըմ Դաւթից։ Մէ աշըղ կար Կաղզուան, աշղին կըկանչայ, կասայ. «Էս շաքիլքը տար տու Սասուն Դաւթին»։

Աշուղ կը վեկալայ կասայ, թէ ի՞մալ ես վեց ամիս էթամ, վեց ամիս գամ, ճժոց տէր եմ, չեմ կանայ էթայ։

Կըբերայ էտուն կնատըցընայ կշըռքի թայը, մէկէլ թայն էլ ոսկի կըլցայ թէ տար քու էրէխէքդ պախա։

Էտ աշըղը շաքիլքը կը վեկալայ օսահաթ (նոյն ժամին) կըդնայ ծոցը, գելլէ կէթայ։

Գնաց Ղլաթայ դուս էկաւ։ Ղլաթայ մարդը խարցրին թէ հո՞ւստ ես։

Ասաւ. «Աշըղ մարդ եմ»։

Ասին, որ աշըղ ես մեզի նաղլ անե՞ս։

Ասաւ. «Բանիս անունն հի՞նչ ա»։

Էտ մարդը կայնաւ թագաւորի ամարաթի տակը նաղլ արաւ։ Թագաւորը Շըմշիկ-խաթունն ա, մարդը մեռէ, յինքը նստէ թագաւոր։ Յիրիշկում տենում ա, որ էտ աշղի ծոցը մէ թուղթ կայ. դանչում ա վերև, տեղ տալում ա, էտ աշըղը նստում ա, ասում ա. դո՞ր ես էթում։

Աշուղն ասում ա. «Էթում եմ Սասունը»։

—Քո կշտին հի՞նչ թուղթ ա։

Վեկալում ասում ա. «Դէ ես իմ (ինչ գիտեմ), մէ շաքիլք ա»։

—Բաց տենանք։

Առնում ձեռ յիշկում ա՝ աղրի զարար (մեծ չափազանց) բան ա։ Շիմշիկ խաթուն միաք ա անում, թէ էտ աշըղը թո էթայ, բալքի Դաւիթ բերայ, ես ձեռքէն առնեմ։ Կասայ, ինչ մուրազ ունես գնա կատարա։ Էրկու խոքի կը բռնայ ճամբի վրէն կը կայնըցնայ թէ Դաւիթ անուոր տղայ կըգայ, ասէք թագաւորը դանչում ա։

Էտ աշըղը գնի կէթայ Սասուն, որ մանի Սասուն, տենում ա

մէկ աւ անող էն զէհէն գալըմ ա։ Էտ աւ անող կը խարցնայ թէ հի՞նչ մարդ ես։

Կասայ աշըղ եմ։

—Ո՞ր եանէն ես։

—Կաղըզուանայ։

—Կաղզուան ո՞ր եանն ա։

—Կապուտկոդայ վերևն ա։

Ցիջաւ ձիանից քաշեց դրբի տակ տփեց։

Էտոնց բլոճը, քեռի Թորոսը ասում ա կոտոշով ա, եաւաշ տփեմ։ Տփեց, թալեց մէ փոսի մէջ։ Գնաց քեռի Թորոսին յիմցրեց թէ մէ աշըղի տփեր եմ թալեր եմ փոսը։

«Հը՞նչ ես տփէ էտ աշըղին, յո՞ւստ էր»։

—Կապուտկոդայ էր։

«Խողն իմ գլխին, ասըմ ա քեռի Թորոսը, Դաւիթը աշխարհը քանդեց չէկաւ ընձի պարծենէր։ Էսի մէ աշըղ ա տըփէ՝ էկէ պարծընում ա»։ Դառնում էրկու ջահիլ տղի ասըմ ա. «Գացէք, էտ աշուղը բերէք, պախենք, մեղք ա»։ Գալըմ են որ տանին էտ աշըղին, ասըմ են. «Քեռի վո՞ւրն ա տըփէ»։

Ասում ա. «Դաւիթն ա տփէ»։

Ասըմ են. «Դաւիթ դաս չէ, յէ՞նա Մըսըր ա»։

Էտ աշըղը կը սաղնայ, կասայ. «Էլ էտ շհարը չեմ գայ մանի, ընձի կը սպանեն»։ Ետ կը դառնայ կէթայ Մըսըր։ Կէթայ Մըսըր, շաքիլը կըտայ Դաւթին։ Դաւիթ շատ կուրախանայ, կէթայ Մսրամէլիքի մօրը կասայ. «Քեռի Թորոսը ընձի դանչեր ա, դու մաց էտեղը, թագաւորութենը դու արա, ես էթամ»։

Խեճնում ա ձինը գալըմ ա որ էթայ Սասուն, շաքին էլ ծոցն ա, տանում ա տայ քեռի Թորոսին։ Գալըմ ա Ղլաթայ կարմիջի վրէն, էրկու ջահիլ դէմը կայնում են. ասըմ են. Դու վո՞ւրն ես։

Ասըմ ա. Ես Դաւիթն եմ։

—Սասունայ Դաւի՞թն ես։

—Թէ հա Սասունայ Դաւիթըն եմ։

—Հրամեցի մեր թագաւորը քեզ դանչում ա։

Առնում են, էթում են։ Տանում են վերև, ձինը քաշում են խաս թաւլէն։ Էթում նստում ա, տենում ա որ մէկ օղլուշաղ (կին) ա, թագաւոր չկայ։ Դաւիթը կայնում ա թէ յո՞ւր ա թագաւորը. Շմշիկ խաթունը ասըմ ա. «Թագաւորը ես եմ, թագաւորը վախճաներ ա։ Ասում ա, թէ խաց կեր, դոր որ կէթաս գնա»։

Բերայ խաց կը կերցնայ Դաւթին։ Դաւիթ խաց կուտայ պրծնի, կասայ. «Ձինը քաշէք դուս ես էթամ»։

Կասայ. «Մութն ա, դո՞ր էթաս, յէսօր մի՛ էթայ։ Գիշերը մնայ

էստե»։ Դաւիթ, ասըմ ա, իմ խելքը կարում ա, որ դու էթում ես էտ շաքիլքի յէտևը, քեզի խափում են, տանեն ՁԼասեն, էտ մեծութենին աղջիկ չըլնի։

Վեկալըմ ա ասում ա. «Զընի, պտի էթամ»։

—Ասում ա յարի ընձի առ։ Հմմ թագաւորի կնիկ եմ, համ էլ լաւ օղլուշաղ (կին) եմ, կափսոնայ (կը կախարդէ) էտ թէ ընձի հնչի՞ չես առնում ես, թագաւորութունը քեզի, էս յոխաթն (ժողովուրդ) էլ քեզի։

Դաւիթը մէ վախտ կը մնայ էտու կուշտը։ Մէկ օր Դաւիթ շաքիլը կանի ձեռը կասայ. «Այ հայ, չելաւ, քեռի Թորոսը ընձի ինչ կասայ, ազապ աղջիկը թողեմ գամ որփեվրի (այրի) առնեմ»։ Կըթողայ Շըմշըմիկ խաթուն, կեթայ Սասուն։

Հելաւ գնաց Սասուն, քեռի Թորոսը, աղբրատանը, էլիկը ուրխցան Դաւթի վրէն։ Մէկ առ ժամանակ մնաց Սասուն, ասաւ. «Քեռի Թորոս, էս շաքիլքը առ թայմին արա, տես ինչ ա»։

Քեռի Թորոսը տեսաւ շատ զարմացաւ։ Ասաւ. «Դաւիթ ջան, էս հոնատ ա հնկէ քո ճանկը»։

Ասըմ ա. «Կաղըզուանայ ա էկեր ա, Արաս-Միրզի աղջիկն ա։ Բա իզին կը տանս էթամ բերեմ»։

Ասըմ ա. «Չէ, իզին չեմ տայ, քե կը տանին, կը ՁԼասեն, քեզի խափում են»։

—Զընի, ես պտի էթամ։

Վեկալնում ասում ա, թէ էնտե շատ զոչաղ մարդ կայ, քեզի խափում են տանում են, որ փչացընեն, մի էթայ։

—Քեռի Թորոս, Դաւիթն ասում ա, դու ընձի ասում ես մի էթա, իմ տղամարդութենն էլ չաժի որ չէթամ։

Հընում բոլոր մախլուխը զանչում ա, ասում ա. «Ախպրտանք, յիրար խետ խաց ենք կերէ, էթալն իմ ձեռը, գալը Աստծու ձեռը, աղօթք յիշացէք»։

Հընում ա խեծնում ա քուռկէջալաթը, զանչում յիր ստեղծող Աստուածը, հնկնում ճամբաքը, մէ առ ժամանակ էթում ա, Ղլաթայ մօտենում ա, տեսնում ա մի գոմշի կու, ինքն իրան փիքր ա անըմ, ասըմ ա. Քեռի Թորոսի ասած կոտշով ըլոճը կուած կընի. կուն որ ըսղտար ա, ինքը հինչ զտար կընի. նա ընձի կսպանի. մէ քիչ էթում ա տեսնում ա, որ չորս հատ գոմէշ մէկ պտի տղայ քշում ա։ Խարցնում ա, թէ պտիկ ջան, էտ սևերն ինչ են. կոտշով ըլոճ են։

Ասաւ. «Չէ, գոմէշ են»։

Ասում ա. «Հընչի՞ խամար էք տանում էք էտոնք»։

Ասում ա. «Տանում ենք գութան լծենք»։

Քշա էթանք տեսնանք ի՞մալ էք լծում էք։

Տղէն նշանց ա տալում ա, ասըմ ա լծնները փոուկ ա, գութանը էսենց լծում ենք, ըշում ենք։

Ասում ա. «Դու մենակ ես»։

Ասում ա. «Չէ, էնա պառկուկ են, քնուկ են գիշերարածները, մաճկալն էլ խետը»։

Խանես առնես գաս տեսնանք։

Ղանչեց բերեց, բարև մնայ հէլաւ հետը։

«Տղերք ջան, Դաւիթն ասաւ, էս գութանը, որ բանցնում էք, կուշտ փորով խաց կը տանք որ օխտը փաթ պըտրտեմ գութանը»։

—Եփօր օխտը փաթը պըտրտիր, յէս օր օխտը ջանիս փլաւ կդայ, կտանք կուտես։

Լծնները յարձըկեց, թալեց դէն, համոլի լուծը դրեց ձիան պաշը, զանչեց Մարութերի Մայրամ Աստուածածին, օխտը փաթ պըտրտեց։

Էն պտի խոտաղն ասաւ. «Էտ քու հիւնարը չէր, քու ձիան հիւնարն էր»։

Օխտը փաթ էլ ձիանից յիջաւ պըտրտեց։ Տեսաւ որ էրկու խատ օղլուշաղ մէկը հացն ա առե, մէկը փլաւ՝ էկան։ Օխտը ջանի խացն ու փլաւը մենակ քաշեց հառէջը կերաւ։

Էն պտի խոտաղը ասաւ. «Հնչի՞ մէ խաց էլ չթողիր մենք ուտինք»։

Խանեց մէ հատ ոսկի տուեց, ասաւ. «Էտոնք չիքոսացին դու խոսացիր»։ Հէլաւ գութնի ռաթըփը կոլոնեց, իր մտքով զանչեց Մայրամ Աստուածնայ, թէ իմ թուրը էս ըռաթփը կտրեց, կեթամ Խանդուդ խանումը բերեմ, որ չկտրեց, յետ դառնամ։ Գնաց թուրը թալեց՝ կտրեց, էտոնք ասին վայ, յախսով (վարձով) ենք գութան բերէ, դու հնչի՞ թուրը թալեցիր կտրեցիր, քասիբ մարդ ենք։

Խանեց մէ ճանկ ոսկի տուեց, ասաւ. «Կը շինա՞յ»։

Ասին. «Կշինայ»։

Հէլաւ ձինը խէծաւ հընկաւ ճամբաս։ Շատն ու քիչը Աստուած գինայ, գնաց։ Մէկ առ ժամանակ գնաց, գնաց Կաղզուանայ դուս էկաւ։ Մութը տուեց վրէն, գնաց մէ բաղի թուշ հէլաւ, ասաւ, մտնեմ էս բաղի մէջ, ձինս թօ էստի արածայ, ես էլ գիշեր սրթրեմ էստե։ Դու մի ասա էտի Արաս-Միրզի բաղն ա։ Ձինը հընկաւ տաշնակները քանդեց, յինքը նըստաւ յաղբրի վրէն խաց կերաւ։ Բաղվանչին Գորգէնն էր, էսենց բախը վեկալեց, յետևանց զանեց Դաւթի քամկին։ Դաւիթ շիտկուաւ, բախը թալեց՝ կէս վերստ ճամբաս գնաց, զանեց Գորգու յէրեսին, յէրեսը թէքուաւ

յետևը, վիզը ծռուաւ, հնկաւ, ուշքը գընաց, վայ ասաւ, մահապարտ հէլայ էտուրը։ Զուր զանեց յէրեսը, պորտը օլբրեց՝ օյամիշ հէլաւ. ասաւ. «Վայ Դաւիթ դու իր»։

«Հա, ես ի»։

—Իմ վիզը ճխտաս դըզա, ես Խանդուդ խանըմ բերեմ քեզի համար, ես էնդրա բաղվանչին եմ։

Վիզը ճխտեց դըզեց։ Արևը մտաւ, հէլաւ ամէն մէ պտուղից քաղեց, բերեց դրեց բոթնոցը, շաքիլքը Դաւթից առաւ, դրեց էդ պտղի վրէն, եայլուզը թալեց վրէն, Դաւթի մատնիքն էլ կապեց ճոթը, տարաւ տըւեց Խանդուդ խանըմին, ասաւ. «Հրամեցի, Խանդուդ խանում»։

Ասաւ. «Շնորհակալ եմ, իմ բաղվանչուց»։

Բացեց տեսաւ որ յիր շաքիլը որ զրկեր ա՝ էկէ խասեր ա յիրանը։ Խանեց մէ ճանկ ոսկի տուեց բաղվանչուն, ջառեքին (աղախին) ասաւ. «Գացէք ձեր տեղերը սթբրուէք»։ Էնդունք գացին։ Ասաւ. «Էս շաքիլ բերողը վոր ն ա»։

—Դէհ հնկէ ճանկս, խանըմ ջան։

Ասաւ. «Սուտ ես ասում, գլոխտ բաղանից կը կտրեմ»։

Ասաւ. «Խանում, էտ լայլբխի ճոթը մէ մանանիք կայ, տես»։

Ցիշկեց շատ խաւնաւ, ասաւ. «Էտու տէրը դոր ա»։

Վեկալեց ասաւ. «Դաւիթն էկեր ա բաղը»։

Խանդուդ խանումը գլոխը չարխեց, խայլին տաւ ձեռը, հէլաւ մէ մաստալի գիւզալ. հէլաւ հնկաւ Գորգու յետևը, գնաց բաղը։ Էսպէտ թեերը կախեց, Դաւիթն էկաւ հնկաւ էտու յէրեսէն կախ, ինչոր խէվրնիկ ձագ յիր մոր ծծերէն կախ։ Վերցըրեց Դաւթին տփեց ծառը, Դաւթի ուշքը գնաց։ Խանդուդ խանում յետ դարձաւ գնաց յիր տեղը։ Էկաւ Գորգէն ջուր զանեց Դաւթի յէրես, հէլաւ նստաւ, ասաւ. «Գորգի, Քուրկէջալաթը ըէ, որ հընեմ էստոնցը ըրթեմ, քանի էստոնց յաչքերը խուփ ա։ Մէ աղջիկ ընձի զանեց, էտրանց տղամարդ էստուց դոչաղ կըընեն»։

Գորգէն էկաւ հնկաւ ոտը, եաման, ասաւ, էթամ առնեմ դամ, թէ չէկաւ՝ ընձի սպանայ։ Գորգէն հէլաւ գնաց։

Ամոն խանըմ, ասաւ, հէլի էթանք, ասաւ, ջոշմիշ հէլեր ա՝ մեզի կը սպանայ, աշխարքը կը բրդայ։

Էտի ասաւ. «Երկուղ եմ անում, վախենամ էթամ ընձի սպանայ»։

Ասաւ. «Երկուղ մի արա, ես դա (այդտեղ) եմ, որ զանա ընձի կը զանա, դու փախի»։

Հէլաւ հնկաւ ճամբաքը՝ էկաւ։ Դաւիթ թուրը քաշեց էկաւ յառէջ, ասաւ. «Շան աղջիկ, դու ընձի հը՞նչ իր զանըմ»։

Ախար դու խարցընիր տենիր վիր աղջիկն ի, բալքի Խայի աղջիկ չի, նոր ընձի պաչիր, ես էլ ջուղաբը ա։

Դաւիթն էլ վեկալեց ասաւ. «Վրէս հնցաւ, դէհ հէլի էթանք բաղի օթախը»։

Գացին նստան։

—Դաւիթ ջան, ասաւ Խանդուդ խանըմը, մարդի կշռանքով ոսկի եմ տուէ, շաքիլքս զրկեր եմ քեզի։

Էն էլ ասըմ ա. «Շատ շնորհակալ եմ»։

Խանդուդ խանըմը ասում ա. «Որ քեզ հաւան չընի, էս շաքիլը չի յդրկի քեզի համար. էրկու թագաւոր էկած են ընձի ուզընկան։ Մէկի անունը Լօռայ Համզի, մէկի անունը Շապկով Խորասանի։ Էրկրսի մանանիքն էլ դրեր եմ խօրս կուշտը, որ էրկսով գան կռիւ, որ մէկն յաղթ հէլաւ, էնդուր առնեմ։ Մկայ քո ձէնն էկաւ խասաւ, էլ ընդոնցից չեմ առնի»։

Դաւիթն ասաւ. «Ես քի չեմ առնի չունք էդ էրկու թագաւորը գան, ես էլ էնտոց հետ կռիւ անեմ։ Աստուած որ մէկիս զոմաթ արաւ, ընտուրը կառնես»։

Խանդուդ խանումն ասաւ. «Առանց կռուի ես քեզի առնում եմ, հը՞նչ ես էթում ես կռուի մէջ»։

Ասում ա. «Որ ես առանց կռիւ քեզի առնեմ, տղամարդ չեմ, գնա տունդ»։

Խանդուդ խանումը վեր ա կենում էթում ա տունը։ Խանդուդ խանումը էթում ա տունը, Դաւիթը պառկում ա, քնում ա, չուր յուար բացում ա։ Հընում ա, գալում են ասում են, թէ թագաւորը քեզի զանչում ա։ Համա Խանդուդ խանըմն ա զանչէ։ Դաւիթը էթում ա Խանդուդ խանումի կուշտը, վեկալում ա ասըմ ա, թէ Խանդուդ խանըմ, հնչի՞ ընձի խափեցիր, ասիր թագաւորն ա զանչում։

Էն էլ ասում ա. «Ես գինում ի դու չիր գե, ընդու խամար, որ էրկու թագաւորն էլ, Լօռայ Համզէն, Շապկով Խորասանին, էկած են»։

Էն էլ ասըմ ա. «Էկած են, բարով են էկած»։

Վեկալըմ ա ասըմ ա. «Ցարի դու հնձի առ, ընդոնց չթողեմ կռիւ անեն, մեղք են»։

Դաւիթն ասըմ ա. «Սասունայ չունք կաղզուան յիրեք ամսուան ճամբախ իմ անուն հնկէ դուս, ես առանց կռիւ չեմ ցնայ»։

Վեկալըմ ա ասըմ ա, թէ էտենց ա, թագաւորը քեզի զանչում ա, ես ուզումի կռիւ չընի։

Էն էլ ասըմ ա. «Զէ, կէթամ որ կէթամ»։

Հէլաւ գնաց, ըտոնցը բարև տուեց։ Էտ մարդիկ բարեն ա-

ռան։ Ըսկի չյիմացաւ թագաւորն թէ Դաւիթը հուստ ա, ետ հուստ չէ։ Աբաս Միրզէն խարցրեց. «Զահիլ Ջան, հո՞ւստ ես»։

—Ես Սասնայ եմ, Ջոջ Մհերի թոռ, Աբամէլիքի էլ տղէն եմ։

Էտ մարդերին պատիւ տուին։ Բերեց գինին լցեց բաղիէքը դրեց յառէջները. գինու թասն էլ դրեց կշտները։ Գորգէն էլ կայնաւ դռան կուշտը, Խանդուդ խանումն էլ կայնաւ սալանը (հաշտը, դռան յետև)։

Խանդուդ խանումը ասում ա. «Գորգի Ջան, մուղաթ կաց Դաւթին ֆաս չտան, դարիբ տղայ ա»։

Էտոնք բերեցին թասերը գինի լցին, յիրար տուին. էկաւ Դաւթի սրէն, պտի տան Դաւթին։ Դաւիթը ասաւ. «Մէկ խմեմ չեմ կշտընայ, երկու խմեմ չեմ կշտընայ, հնի վեց օխտ թաս՝ անխամ գինի, ամօթ ա», բաղիէն դրեց բերնին ու խմաւ։ Մախլուխը ոխակալուան վրէն. թէ ինչպէստ մարդ ա, թագաւորների յառէջը բաղիէն դրեց բերնին խմաւ, պէտք ա գլոխը կտրենք։ Էնտեղ քաւոր Գորգին ասաւ. «Սանհէր Դաւիթ, ֆաս տուն ա»։

Դաւիթը ճչաց, մէկի ոտից վեկալեց տփեց էն մէկէլի գլխի վրէն, մէկէլները թողին փախան։ Խանդուդ խանումը ու քաւոր Գորգին էկան Դաւթի ձեռը բռնին առան գացին։ Գնաց, խելքն էկաւ գլոխը, խմերէր քէֆովցեր էր, գնաց պառկաւ քնաւ։

Էտի թօ քնի։ Լօռայ Համզէն, Շապկով Ֆորասանին էկան թագաւորի մօտ գանգատ, թէ սարի Ջանաւարը դու հնչի՞ր բերում էստեղ կապում որ մեղի ֆլասեց։ Էն էլ վեկալեց ասաւ. «Էտ իմ արութքը չէ, Խանդուդ խանումի արութքն ա, ես չեմ գինում հո՞ւստ ա, հուստ չէ»։ Ղանչին Դաւթին, բերին դիւան։ Ասին. «Դաւիթ, դու էտ ինչ օյին խանիր մեր գլոխը»։

Ասում ա. «Մենք էկեր ենք խօսալու խամար, դու բերիր գինին դրիր յառէջ, խմայ քեֆոֆցայ, ընձի մեղք չունեմ։ Աբաս Միրզէն խարցնում ա, թէ դու հնչիր էկէ։ Էն էլ ասում ա, թէ էկեր եմ քու աղջիկդ առնեմ։

Ասում ա. «Էտի իմ բանը չէ, աղջկայ բանն ա, վո՞ր մէկին կառնի, թօ առնի»։

Էտ թագաւորներ կասեն. «Մենք եկեր ենք կռիւ անենք, որ մէկս յաղթայ՝ էնի առնի»։

Դաւիթը վեկալնում ա ասում ա, թէ թագաւորներ, ընձի զոշուն չունիմ, դուք գացէք կռիւ արէք, որն յաղթեց նոր ես ընդու խետ կռիւ կանեմ։

Էտ մարդիկը հընում են էթում են կռիւ անելու։ Էթում ա, Դաւիթը Խանդուդ խանումի կուշտը, «Խանդուդ խանում, ես էլ եմ էթում կռիւ, դու ի՞նչ ես ասում»։

Էն էլ ասում ա. «Ես չեմ ուզում դու էթաս կռիւ»։

Ասում ա. «Իմ սիրտը մի արուն դարձու»։

Ասում ա. «Հնչո՞ւ արուն դառնում քո սիրտը. շատ որ արիր՝ շահարը կը բրդեմ»։

Խանդուդ խանումը վազում ա խօր կուշտը, ասում ա. «Դու մէ բան անես, Դաւիթը կռիւ չէթայ»։

Կ'կանչայ Դաւթին կը տանայ։ Կասայ. «Յարի ծուռ ծուռ մի հընի, իմ աղջիկը քեզի առնում ա, ես խաբար կանեմ էնդոնք էլ կռիւ չանեն»։

—Ա՛յ հայ, Դաւիթն ասաւ, իմ տղամարդութուն փչամ, իմ տղամարդութուն կտամ մէ թիզ լաչկի (կնոջ գլխի շոր)։

Էտի գինի կեթայ Խանդուդ խանումի կուշտ, կասայ. «Խալամիշ արա, էթում եմ կռիւ, գինի որ էնդոնք ընձի սպանում են»։

Խանդուդ խանում յինքն յիրան կթալայ ձիան ոտի վրէն, կասայ. «Վերև Աստուած, ներքև դու, ծուռ ծուռ մ'յելի (մի լինի) մի գնա»։

Ասում ա, թէ էնտոնք էրկ էրկու խազար Ջան՝ կանայ չորս խազար Ջան, կարելի ա ընձի սրպանին, իմ Ջանդակ մի թող ա-բեի յերես, յարի իմ Ջանդակ տար խորա։

Էն էլ ասում ա. «Ես ինչո՞վ ճանչնամ քո Ջանդակը էտ չորս խազար Ջանի մէջ»։

Դաւիթը թիկունքը բանում ա, որ մսէ խաչ կար, ասում ա. «Էստով դու ընձի կը ճանչնաս»։ Հընում ա էթում ա կռիւ։ Էթում տեսնում ա սար մէջ տեղ, էրկուսի զոշունը առած յիրար, Ջարդում են։ Ղանչայ Մարութենի Մայրամ Աստուածածին, թուրը կառնի ձեռը կը տայ մէջները, բիրտան կը բրդայ, էրկու թագաւորի զոշունն էլ կը կտրայ։ Էրկու թագաւորի գլխների քաքուլները կը կապայ յիրար, կը թալայ ձիան դաշը, որ բերայ տայ անեին։ Ընտուց կըտեսնայ որ մէկը տղամարդի շորը խագէր ա, մզրախն էլ առեր ա ձեռը, զանում ա Ջանդրկին բանցըրցընում ա թամաշա ա անում։ Դաւիթը չի յիմանում ա Խանդուդ խանումն ա։ Գալիս են յիրար կուշտ։ Խանդուդ խանումը ասում ա. «Մորվերես Լօռայ Համզէն, Շապկով Ֆորասանին գլխները կտրես, զոշունը Ջարդե՞ս, թալ գետին կռիւ անենք։

Դաւիթն էլ կասայ. «Դու ի՞նչ մարդ ես, որ ընձի ասես թալ գետին կռիւ անենք»։

Կասայ. «Մարդ եմ, էկեր եմ քո խետ կռիւ անեմ»։

Վեկալում ա ասում ա. «Էսքան զոշուն ընձի չդիմացաւ, դու ինչ պտի դիմանաս»։

Էն էլ ասում ա. «Որ չդիմանամ ըսկի չեմ գայ քո խետ կռուանի»։

Դաւիթ գլխները թալեց գետինը, խասան յիրար, սրֆտա յերար գիւրզ թալին, Դաւիթը զանեց, Խանդուդ խանումը պրատ հնկնէր ձիանից ցածր, ձեռը զանեց դոշի մէջը, վեկալեց Խանդուդ խանումին տփեց գետինը, թուրը քաշեց որ վիզը կտրա, Խանդուդ խանումը ձեռները տարաւ յիր դոշը բացեց, ասաւ. «Ախր ես Խանդուդ խանումն եմ»։

—Վայ, Դաւիթն ասաւ, քու տունն աւերի, դու էտ ինչ աբեցեր, բալքի թրով զանում ի, վիզդ թռնում էր։

Էն էլ ասաւ. «Դու ընձի չասեցիր թէ յարի ջանդակների մըջից ընձի գթի, ես էլ հելեր եմ էկեր եմ քո հալարին»։

—Հը՞նչի տղամարդի շոր խագար. օղուշաղ իր, օղուշաղի շոր խանդնիր։

Էն էլ ասաւ. «Քո տղամարդութունդ ջուրում ի» (փորձում էի)։

Հէլան թագաւորների գլխները թալին ձիան վրէն, էկան դրեց թագաւորը, բերին տուին թագաւորին. թագաւորն ասաւ թէ իմ աղջիկն էլ տուի քեզի, հալալ հրնի քեզի։ Բերին տարան ժամ պսակին։ Բերին մէտեղ տուեցին, Դաւիթ առաւ յիր կնիկը նըստաւ։ Մէ ժամանակ ետաց՝ Դաւիթն ասաւ. Յարի էթանք մեր եանը, Սասունը։

—Չէ, ասաւ, մացի էս տե։

Խանդուդ խանումը էրէխով հելաւ. ինը ամիսը թըմբմաւ, ինը սըհաթն (ժամ) էլ թըմբմաւ, էտուց մէ էրէխայ հելաւ։ Քաշեց էրկու սհաթ, տատմօրն ասին, որ գայ պորտը կտրայ։ Տատմէրն էկաւ, որ պորտ կտրայ, էտ էրեխէն ձեռ թալեց տատմօր եախէն՝ քաշեց քցեց յիրան վրէն։ Էտի վէժաց փախաւ, ասաւ. «Վիշապ ա, ընձի քաշեց ձեռց»։

Թագաւորն ասաւ. «Չէ, մեր թոռն ա, գնա պորտը կտրայ»։

Էրկու խոդով էկան էտ տղի թեերը բռնեցին, պառաւը պորտը կտրեց, տարան էտուրը կնունք, հարցրեց անունը ինչ դնենք։ Դաւիթը ասաւ, «Պապիս անունը կը դնեմ, Մհեր»։ Անունը դրին Մհեր։ Պախեցին, մէ էրկու տարի պախեցին էտուն, ջոջցրին։ Էս խետ որ ջոջցաւ, գնաց հնկերտանքի հետ խաղ էր անում էր, վոր մէկին զանում էր, գլուխ, թև, մէջքը ջարդում էր։ Էլիկը գանգատուոր հէլան թագաւորին, թէ քո թոռը մեր տղերքի քոքը կտրեց, էս ինչպէստ պրատ հրնի։ Աբաս-Միրզէն զանչում ա Դաւիթին, ասում ա. «Քո տղէն առ քեզա, խալխի տղէրքն հըմմէն սպաներ ա»։

Էն էլ վեկալում ա ասում ա. «Մէ քանի հոգի դնենք խետը թո էթայ աւ անայ, որ շահարից կտրուի»։

Աբաս-Միրզէն յիրան վեց տղէն գնում ա խետը, որ էթայ աւ անայ։ Մհերը խէծնում ա Բուռիէջալաթը էթում ա քեռիքի խետ աւ անելու։ Աւը տանում ա պապի տունը, չի բերում ա խօրը։

Մէկ աւ ժամանակ էտենց տանում ա։ Մէկ աւուր մէկ օր խէրը ասում ա. «Մհեր ջան, մէկ աւ էլ բե, ես ուտեմ»։

Մհերը ինատ ա անում, հնկնում ա քիթ ու բերնի վրայ խաց չուտում ա։ Դաւիթն ասում ա. «Խանդուդ խանում, յէլի քաշի յիր տեղի վրէն թո քնի, չեմ ուզում էնտու աւը»։ Խանդուդ խանումը իշտա քաշում ա, չի կանում ա քաշայ քամկէն։ Ասում ա. «Դաւիթ, ըստուր չեմ կանայ յիրար տամ, յարի դու տար»։ Դաւիթը հնում ա քաշում ա, շորերը պրծնում ա յիր վրայէն, յինքը չի պրծնում։ Մնում ա ասում ա. «Ոչ ու փուչ մեռնի յինքը, սողն իմ գլուխը կուտայ»։ Էն իր տեղ պառկաւ, էն էլ տեղս տեղ մնայ։ Համէն օր քեռիքը Մհերին քնուկ տեղէն կը խանին կը տանին աւի, էտ յառաւօտն Մհերը գնայ քեռիքին խանեց, ասաւ. «Յէլէք էթանք աւ անենք, որ էսօր հէրս աւ ա ուզում ա»։ Հէլան ձիանքը խէծան գացին։ Զանը կէս օրուան բոլ աւ արին, քեռիքը վեկալին ասին. «Մհեր ջան, յարի էթանք տունը»։ Մհերն ասաւ. «Չէ, նստենք քէֆ անենք»։ Վերցրին ասին. «Մհեր ջան, ինչպէստ քէֆ անենք»։ Մհերը էրկու ծառ բերեց փակցրեց յիրար, ասաւ. «Քեռիք, յիրեքը էս ծառը խէծէք, յիրեքդ էլ էն»։ Ասին հնչի՞. Ասաւ. «Տըրնկոդա խաղանք, էթանք»։ Էտենցը բերեց խաղցրեց։ Ասաւ. «Քեռիք, յարէք չուր ծէր»։ Քեռիքը էկան խէծան ծէրի վրէն, յինքը իջաւ ու ծառերը թողեց։ Խրտ թողելուն, ծառերը յիրեքը արևմուտք, յիրեքն էլ արևելք թալեց։ Ցինքը հէլաւ իր աւը վեկալեց, հընկաւ ճամբաս էկաւ. մէրը օթախի կուրն էր, յիրիշկաց տեսաւ որ Մհերը գալում ա, աղբրատանքը չկան։ Ասում ա. «Դաւիթ, Մհերը գալում ա, իմ աղբրատանք չկան»։ Վեկալում ա ասում ա. «Մհերի ձիան հետ քո աղբրատանքի ձինը չի գայ, էնի խրեղէն ա»։ Մհերը գալում խանում ա խօր մօտը ասում ա. «Առ քեզի աւ, յըմմէն օր աւ, աւ, աւ, յէտա բերեցի քո աւը»։

Վերցնում ա մէրն ասում ա. «Մհեր ջան, քո քեռիքդ յուր էն»։

Ասում ա. «Քեռիք յիրեքը կապուտկողը տոմները չակրատում ա, յիրեքը Սասուն»։

—Վայ, ասաւ, իմ տունը քանդուաւ, չիսերածը (չը խերուի իր արևուց) իմ աղպրատանքին ըսպաներ ա։

Մհերը յետ ա դառնում ա, էթում ա պապի տունը։

Դաւիթը ասում ա Խանդուդ խանումին. «Իմ յերեսը չրռնայ

որ անոերի յէրեսին առնի, Մհերն էլ թո ինայ էն վեցի բաղալը, հէլի էթանք մեր երկիրը»։

Մէ ձի Դաւիթն ա խէծնում, մէկն էլ կնիկը։ Ահա, յիրանք բեխարար էթում են։ Էթում են Սասուն։ Կապուտկողը, Կաղզուանը, Ղլաթը, Մսըր յըմմէնով վեկալած են զօշունը բռնած են ճարի (ճանապարհ) դէմ, կայնած. տաս հազար հոգի, որ Դաւթին ըսպանեն, հայիւ (վրէժ) խանեն, չունքի Մսրամէլիքին ըսպաներ ա, չունք որ էկեր ա Շիմշիկ խաթունին սիրեր ա, Կապուտկողը քանդեր ա, էլը տարեր ա, Կաղզուանի էլլիկի տղերքին յըմմէն Մհերը սրպաներ ա։ Կաղզուանայ դէմն ու Մսրայ դէմը բաղան են քաշած են, որ Դաւիթը չկանայ հնցնի էթայ Սասուն։ Դաւիթն ու կնիկը էկան խասան էդ զօշունին և էլ բաղանին։ Խանդուդ խանումը ասաւ. «Ես մզրաղի ծէրով բաղանը քանդեմ, դուն էլ զօշունը ջարդայ»։

Էնի բաղանը քանդեց, էնի զօշունը ջարդեց։ Յիրար խեռ հէլան Ղլաթայ դուս էկան։ Ղլաթայ որ դուս էկան, տեսան, մէ ջահիլ թոսուն տղայ ձիրը խեծե, տասը ձիաւորի խեռ կայնէ կարմընջի վրէն։ Էտոնք էկան Դաւթի յառէջը կորին, ասին. «Դուք ո՞րն իք»։

—Ի՞նչ ես խարցնում, Դաւիթն ասաւ, ես որը կնչնեմ կնչնեմ։

«Զէ, ասըմ ա, ասէք տենանք, հո՞ւստ էք»։

Դաւիթն ասում ա. «Սասնայ եմ»։

Ասում ա. «Պըտի էստեղ ես քո խեռ կռիւ անեմ»։

Ասում ա. «Դու ինչ ես, որ իմ խեռ կռիւ անես»։

Ասում ա. «Ես պըտի անեմ քո խեռ, ինչ հընեմ հընեմ»։

Դաւիթը մհալ (լայեղ) չանայ, կասայ. «Ես քո խեռ կռիւ չեմ անի. գնա մէկ տաս հազար ձիաւոր բէ, որ ես քեզի խեռ կռիւ անեմ»։

Կասայ. «Ես տասը հազար ձիաւոր բերող չեմ, ես էլ պակաս մարդ չեմ, ես մենակ քո խեռ կռիւ պըտի անեմ»։

Դաւիթը կը վեկալայ կասայ. «Իմ կուշտ արդ (կնարմարդ) կայ, տանեմ Սասուն, էտ գամ կռիւ անենք»։

Ասըմ ա. «Քո կուշտ համայիլ կայ, յարի համայիլով յօրթուայ որ գաս»։

Դաւիթը յիր մաքով ձախ ծոցի վրէն կը յօրթուայ։ Համայիլը աջ ծոցից էկաւ ձախ ծոցը, աջ ծոցը սեցաւ։ Հէլաւ գնաց տուն։ Համէն յաչքալուսէք տուին Թորոսին, թէ տղէտ առաւ կնիկը էկաւ։ Մախլուխը զարմացան Խանդուդ խանումի վրէն, ասին էս տեսակ էլ օղլուշաղ գլնի։ Քեռի Թորոսը Դաւթին ասաւ. «Քեզ էլ զուրբան, քո կնկան էլ, որ էս ջուռա օղլուշաղ ա»։ Դաւիթը յիրեք ամիս

ժամանակ էր տուէ որ էթար կռիւ. յիրեք ամիսը քաշեց մէ տարի։ Քեռի Թորոսը տեսաւ Դաւթի ծոցը սեցեր ա, ասաւ. «Օղուլ (որդի), սուտ ես յօրթըուացէ»։

Ասաւ. «Քեռի Թորոս, մէ ջահիլ տղայ, համա աղջկայ թուսպուրը, կայներ էր իմ խեռ ուզում էր կռիւ անէր, ես յօրթվացի համա սրտիս չէր էթի կռիւ, համա սեցեր ա ծոցս»։

Ասաւ. «Որդի, մի գնա կռիւ։ Քո մուխ առաւ քարը, էլ դու չես կանայ էթայ կռիւ, սուտ ես յօրթըուացէ»։

Հէլաւ, յինքը յանկաջ չարաւ, խէծաւ ձինը գնաց։ Գնաց էտ ջահիլ տղի հետ Դաւիթը կռիւ անէ։

Հէլաւ գնաց Ղլաթայ արանքը ու մէկ էլ Վանայ, տեսաւ որ մէ ջահիլ տղայ դէնը գալըմ ա. էկան, Դաւիթն ու էտ ջահիլ տըղէն յիրար բարև չտուին. էն ինչ որ Դաւիթն ա՝ խայի գէյին ա (տեսք, էն ինչ որ ջահիլ տղէն ա՝ կռապաշտի գէյին ա։ Գալըմ են ջխտով առնըմ են յիրար, կռիւ են անըմ են։ Յիրեք օր, գիշեր ցերեկ կռիւ են անըմ են, անահուն կանանչ փչացնում են։ Դաւթին զանըմ ա տղէն գրդով քցում ա, որ հընկնում ա՝ թուրը քաշում ա որ մորթայ, Դաւիթը ասըմ ա. «Դու որ ընձի մորթում ես, իմ քաջի ձեռնէն իմա՞ լ պտի պրծնես»։

—Քո քաջը ո՞րն ա, խարցնում ա տղէն։

Ասըմ ա. «Խանդուդ խանըմն ա»։

—Էնի խո իմ մէրն ա։

«Դու Մհե՞րն ես»։

—Կասայ. Դու էլ Դաւիթն ես։

Կասայ. «Դու որ Մհերն ես, էս ա յիրեք օր ընձի հը՞նչի իր չարչարում. ես էն Աստծուց կը խնդրեմ, որ կերպած քարի մէջ մնաս, օրական յիրեք նշխար քո խորակը հընի ուտես, չունք Քրիստոս գայ դաղաստան քեզի մահ չընի»։

Ամօթու Մհերը էտ դարձաւ գնաց պապի տունը։ Դաւիթն էլ գնաց Ղլաթը։ Ղլաթը գնաց, էն ջահիլ տղի խեռ կռիւ արաւ։ Էն ջահիլ տղէն չկարցաւ դիմանէր, փախաւ մտաւ դամշի մէջ։ Դաւիթն ասաւ. «Էսենց ջուր չընի, եաւաշ ձինս լուսմ»։ Տկլոզցաւ, համայիլն խանեց, խամբուրեց, դրեց շորերի վրէն, յինքը մտաւ ջուրը ձինը լոգկըցրեց։ Էտ տղէն նետը դեղեց ու թիկունքին զանեց։ Դաւիթը բոռաց։ Բոռալու բիմին էն տղէն տեղն ու տեղը մեռաւ։ Զէնը գնաց Սասուն, ասին, վայ վայ, Դաւթին ըսպանին, Դաւթի ձէնն էր։ Հէլան վեց ախպրով, քեռի Թորոսը, էլլիկով, մէ խարիր խոգի դացին։ Դացին տեսան, Դաւիթը շորերը թալէ թիկունքին, պարտում ա, ասին. «Դաւիթ, էտ ինչ ա ուրթէ քի (պատահել)։

Կասայ. «Իմ ոգանողը էտ ա դամշի մէջն ա, մէ գացէք տեսէք»։

Կեթան տեհան որ տղի շորերով մէ աղջիկ ա, մեռեր ա։ Կը տենան, որ էտու յաչքեր շուշայ յաչք ա, ասեն. «Դաւիթ, կասեն, աղջիկ ա, յաչքերն էլ շուշայ ա»։ Կասայ. «Էտի ինձնից ա, Շմշիկ խաթունի աղջիկն ա, դէհ, կասայ քաշէք բերէք իմ յաչքը առնի էտուն»։ Կը բերեն. «Օխա՛յ, ասում ա Դաւիթը, ջանս խովցաւ, դու ընձի սըպանում իր, դու ընձնից շուտ մեռար»։ Յետև կասայ. «Մէ էս նեռը քաշէք խանէք իմ թիկունքէն»։ Որ կը քաշեն, կասայ. «Ես գինամ, էս իմ մեռնելու ժամանակն ա, ընձի կը բառնաք դաւի վրէն, ձեռս կախ թողէք»։ Բիչ կենցնի, Դաւիթ խոգին կասայ։ Բերին թապութ շինին, մէկը աղջկան, մէկն յիրան։ Ջխտով զանին դաւի կողը, մէկն էս եան, մէկը էն։ Աչ ձեռը թողին բաց, էկան ճամբի մէջ տեղը, մէ բաղրկան էկաւ ուստա. խարցրեց թէ էտ ինչ թապութ ա դաւի վրէն։ Ասին. «Դաւիթն ա»։ Շատ դէմ հնկաւ, ասաւ. «Ափսոս, Դաւիթ, որ մեր երկրից դուրս էկաւ, փչացաւ»։ Մըշկընները խարցրին, ասին, թէ բա էտու ձեռն ինչի՞ ա թապութից դուս։ Ասաւ, թէ էտու միտքն էն ա, թէ աշխարհ էսէնց էկաւ, էսենց էլ գնաց իմ ձեռու մէջ։ Առան գացին ճամբի մէջ տեղ, չորս վերստ տեղ մնաց։ Ջէնով Օհան վազաւ, Խանդուդ խանումը տանիսն (կարանն) էր, ասաւ. «Ջան ախպէր, Դաւիթը սաղ ա, իմալ ա»։ Ասաւ. «Մեռնի բաշ (կինը) ապրի բուղէն (այրը)»։ Ասաւ. «Ա՜յ հայ, Դաւթի յեսևը էստոնը ընձի պահողը չէն», յինքը տանըսից գլխի վըրէն թողեց, հնկաւ քարի վըրէն, ջարդ ու փշուր հէլաւ. ծծերից էլ կաթ էկաւ։ Բաշին տարան տունը։ Դանք դըխ Դաւիթը։ Դաւիթն առան էկան, բերին տեսան որ խարսն էլ ա մեռէ։ Քեռի Թորոսը շատ դէմ հնկաւ, ասաւ. «Իմ տղէն մեռաւ, իմ խարսն հնչի՞ մեռաւ»։ Խալիթը վեկալին ասին. «Ջէնով Օհանի արութքն էր»։ «Փչանայ Ջէնով Օհանը», ասում ա քեռի Թորոսը։ Բերում են պատարագ անըմ են, յիրեքին էլ խորում են։ Քեռի Թորոսը ասըմ ա. «Մեր խարսից ու մեր տղից թէ տղայ հէլէր ա աշխարհք կը բրդայ»։ Խանդուդ խանումի կուշտ չորս օղուշաղ կայնուկ ա հէլէ. ասում են. «Էտու ծծերից կաթ թալեց»։

—Էմալ ա, կասայ քեռի Թորոսը, էտուց էրէխայ հէլեր ա, պըտի էթանք բերենք։

Քեռի Թորոսը վերցնում ա Ջէնով Օհանն ու էթում ա։ Մէ գոմշի կաշի, մէ ժնճիլ էլ թալըմ ա ձիու վրէն. ասըմ են հը՞նչի ես թալըմ, ասըմ ա տանեմ Ջէնով Օհանի բոլորը փաթթեմ, որ բռնայ չճղուի։ Հէկնում են, էթում են, կաղզուանայ դուս են հըլնում են։ Ջէնն էթում ա Արաս-Միրզին։ Ասում են. «Քեռի Թորոն էկաւ։ Էն էլ ասըմ ա. «Էկաւ թոռը կը տանայ, բերէք օխտը դանէն ներս զէրզամին տանենք, պախենք, նազարէն կշտին զարկուի, որ խորոզբոր ձէնը յինքը չլսայ, որ դուրս հնկի»։

Քեռի Թորոսը էկաւ կայնաւ ասաւ. «Մեր էրեխէն տուր տանենք»։

Արաս-Միրզէն ասաւ. «Էրեխայ հո՞ւստ ա, որ տանք»։

—Իմ հարսն ասում էր կար, ասաւ, քեռի Թորոսը։

Էն էլ ասաւ. «Օղորթ ա կար, համա մեռեր ա»։

«Քանի՞ տարեկան էր, որ մեռաւ» խարցնում ա քեռի Թորոսը։

Ասում ա. «Յիրեք ամսական էր»։

—Դու գա՛ս իմ թոռի գերեզման ընձի տաս նշանց։

Տարաւ մէ գերեզմընի տուեց նշանց։ Քեռի Թորոսը չափեց՝ մէ շէնք հէլաւ։ Ասաւ. «Էս իմ թոռի գերեզմանը չէ, սուտ էք ասում, իմ թոռը ամիսը մէ տարուայ գեօրա ջոջընում ա, յիրեք շէնք ջոջցած պտի հնի»։ Վեկալեց ասաւ. «Էս էլլիկի մեղքը մի քաշա, Արաս-Միրզա, տո՛ւ իմ թոռը տանեմ»։ Արաս-Միրզէն կայնաւ չտուեց, ասաւ. «Սուտ չեմ ասում, մեռեր ա»։

Ջէնով Օհանը ասաւ. «Հէկա ես բռռում եմ, տես ինչ դատայ ծանդը ոտք կնիկ կայ՝ յանցուցք կանայ, ինչ դատայ հալիւոր կայ՝ կը մեռնի, ինչ դատայ պառվըներ կայ՝ կը մեռնի, մատակը կը ձագոտի, կովը կը հորթըկտի, ձինը կը քուռկըտի, յարի էստոնց մեղքի տակ մի հնկի, բե մեր թոռը տուր տանենք»։

Տենում ա որ թագաւորը չի տալում, վերցնում ա գոմշի կաշին փաթթում ա մէջքին, որ փորը չճղուի զօռից, բնատով էլ (շղթայ) փաթթում ա, ու մէկ նարայ ա քաշում (ճչում է)։ Նարայ քաշելուն պէստ՝ ձէնն հնկնում ա Մհերի յանկաջը. «Յուս, ասում ա, սուս, էս իմ խորոզբոր ձէնն ա»։ Ասում են. «Դուրբան, քո խորոզբէրը դո՞ր ա, վեց ամիս զատ ա»։ Մէկ էլ ա նարայ քաշում. էլի հնկնում ա Մհերի յանկաջը, ասըմ ա. «Վալլահ էսի իմ խորոզբոր ձէնն ա»։ Էլի էստոնք քօչոմոստում են, ճիժ ա բռռում ա, հո՞ւստ ա խորոզբէրդ էստեղ։ Էլլիկը բիրդան գալըմ են զանգըտաւոր, ասըմ. «Թագաւոր, էտ ինչ հանիր մեր գլուխ, էն ինչ խալիւորն ա, խալիւոր մեռաւ, էն ինչ պառաւն ա, պառաւ մեռաւ, էն ինչ էրեխով օղուշաղն ա, էրեխէն թալեց, էն ինչ որ մատակն էր, յինքը ձագոտաւ, էն ինչ որ կովն էր՝ հորթըկտաւ, էն ինչ որ ձին էր՝ քուռկըտաւ»։ Ջէնով Օհանը ասաւ. «Գանդըտէք, չգանդըտէք, էս մէ բերանն ա մացէ, ես պըտի բռռամ»։ Մէկ էլ բռռաց։ Խբտ բռռալուն, Մհերը նազարէին տփեց զուռնաչու գլխինը, էն էլ փչացաւ, էն է. թայտաշ տգերքից որը մէկը հնկաւ ճանկը, տփեց պատը ցիսեց, դուռը քաշեց ճղնախան արաւ, հէլաւ դուս, յաչքերը

բակ տուեց, ութ տարեկան գոմշի պէս ինչ որ թէ լցուաւ, էկաւ քեռի Թորոսին գրկեց։ Քեռի Թորոսն էլ էտուն գըրկեց։ Մհեր ճխտեց, քեռի Թորոսի կողրանք կպաւ յիրար, լիզուն լալկուաւ, ջուրն զանին յէրեսը, պօրսն օլօրին, օյամիշ հէլաւ, ասաւ. «Ոչ ու փուչ մեռնի քո պէստ տղէն»։

Վերցրին ասին. Հնչի։

Ասաւ. «Իմ կողրանքը ճխտեց ջարդեց»։

Աբաս-Միրզէն ասաւ. «Բա ես իմալ ի, վեցը տղիս ըսպանեց»։

Ասաւ. «Ես ինչ անեմ, քո թոռն ա»։

Ասաւ. «Հէրը վեցի փոխնակ էտի տուէ ընձի, էկար դու տանում ես. Մհեր ջան, իմ աղ ու հացը քե հալալ հլնի»։

Քեռի Թորոսը հալալամիշ հէլաւ Աբաս-Միրզի խետ, առաւ Մհերին հէլաւ դուս։ Վեկալեց ճամբի մէջ տեղը Մհերը խարցրեց. «Քեռի Թորոս, իմ հէրը ո՞րտեղ ըսպանեցին»։

Էն էլ ասըմ ա. «Ղլաթայ մէջը ըսպանեցին»։

Ասաւ. «Ո՞րն ա ըսպանէ»։

Ասաւ. «Սիրողի աղջիկը, յինքը սիրող ա արէ Շիմշիկ խաթունի հետ, էնտու աղջիկը»։

Վեկալեց ասաւ. «Քեռի Թորոս, Հայն ու գինին, Տէր կենդանին, էստուց բրդելով պտի էթամ»։

Ասաւ. «Ինչով կբրդես»։

Ասաւ. «Ըստուց մէ թուր ու գիւրզ կառնեմ բրդելով կէթամ»։

Ասաւ. «Դու չես կանայ էթայ բրդի»։

Ասաւ. «Հընչի՞»։

Ասաւ. «Քո հօր թուրը, գիւրզը, քամանը, թաքը, համայիլը Մարութենի Մայրամ Աստուածածինն ա»։

—Համա ի՞մալ գընի, էթանք բերենք։

Ասաւ. «Չէ, ասաւ, չընի կէնց, քսան հատ անծին էրինջ տանինք, գնանայ տանինք, էլիկը գայ, պատարագ անենք, նոր դուռը բացուի, մտնես մէջը սգիթա թաքը դնես գլոխդ, քամարը կապես մէջդ, չաքմէքը խագնես ոտրդ, համայիլ դնես ծոցդ, գիւրզը առնես ձեռդ, խեծնես Քիւռկէջալաթը նոր գնես տղամարդ, էթաս կռիւ անես, քո դուշմանը բրդես»։

Նոր կը գան մատաղը կը վեկալեն, գահանէք կը զանչեն, ժողովուրդ կը զանչեն, կէթան Մայրամ Աստուածածին, (տայ մուրաղըդ), էրինջները կը մատղեն, պատարագը կանեն։ Մայրամ Աստուածածնայ դուռը կը բացուի, Մհերը չոքէչոք կէթայ յիրեք խետ կը խամբուրայ, թաքը կը դնայ գլոխը՝ չի մտնի, կասայ. «Քեռի Թորոս, էս հնչի իմ գլոխ չի մտնում»։

Կասայ. «Որդի, հինչ քե եմ տեսէ՝ զարմացեր եմ»։ Քամարը

կը կապայ՝ չխառնի, չաքմէքը կը կոխայ ոտները՝ չմտնի, համայիլը կը դնայ ծոցը, գիւրզը կառնի ձեռը, կասայ. «Մէ խալվար զօռզօշում էստու գլոխը հլնէր, ես էլ տղամարդ դուս կըգի»։ Քեռի Թորոսը կասայ. «Փչանաս դու, ինչ քեզի տեսայ, քո քամին էլ մեզի կը փչացընայ»։ Էն տեղ Մհերը թուրը կը թալայ թեը, «Բերէք իմ Քուռկէջալաթ, բերէք, ձէն կտայ։ Բերէք իմ շաշփանու զալխան, (հնգեմատնանի վահան), բերէք, աշխարք բրդէք, իմ խօր հայիգ խանէք, դուշմնի արուն խմէք, որ իմ սիրտը խոշնայ»։

Հէլաւ դուս, բերին Քուռկէջալաթը։ Քեռի Թորոսը բռնեց գլոխը, թուրն առաւ ձեռը՝ չինարի ծառը կայնուկ էր, ասաւ. «Քեռի Թորոս, ես կռիւ չեմ արէ, սըգիթա էս ծառը կտրեմ, թէ իմ թուրը էս ծառը կտրեց, կը կանայի քամակը իմ հօրն ու մօրը, թէ չկտրեց՝ չորնայ»։ Թուրը թալեց, ծառը կտրաւ կայնաւ քոքին։ Ասաւ. «Իմ հօր մէջքն էլ կոտրի, իմ մօր մէջքն էլ, իմ թուրը չկտրեց էս ծառը»։ Տեսաւ որ քամին զանեց ծառն հնկաւ։ Ծառն հնկնելուն փառք տուեց Աստուն, ասաւ. «Խօրս մէջքն էլ կանըշնայ՝ մօրս էլ»։ Հէլաւ խէծաւ ձինը, զանչեց Մարութենի Մայրամ Աստուածածինը, գնաց սըգիթա պապի շահարը կտրեց, յետև էկաւ Մըսրը կտրեց, էկաւ Կապուտկողը կտրեց, էկաւ Ղլաթը։

Ասին. «Քու հօրը Ղլաթն ա սպանէ, էստա մախլուխ հընչի՞ բրդիր, էստա մարդու արունք հնչի՞ մտար»։

Ասաւ. «Իմ խէրն Կաղզուանայ հէլե, Աբաս Միրզէն ա հէլե սարիր, ընտու համար էտուն սպանի. մեր ջոջ դուշման Մըսրն ա, ընտուն էլ էնենց բրդի. Քեռի Թորոս ասում էր, Կապուտկողայ ջուրը շատ զօրեղ ա, շատ մարդու ֆնաս կը տան, ընտու համար էնտոնցը սըպանի. Ղլաթը Շըմշիկ խաթուն հօրս խաբեց տարաւ կուշտը, որ յիր ժառանգն հէլաւ խօրս ըսպանեց։ Ղլաթն էլ բրդեցի, մէ կատու մնաց»։

Կատուն հէլաւ ծառի գլոխ, Մհերը զանեց, էն էլ բերեց ցած։ Էլ գետին էտու ձիու ոտների տակը տայանմիշ չէր հընում, չունք չոքերը խրթուում էր։ Ցիրիշկաց տեսաւ Ղլաթայ վիրեը մէ սար կար, դէմ արաւ էտ սարը, հէլաւ սարի գլոխը, խարցրեց՝ «Էս ինչ սար ա»։

Ասին. «Էսի կեռպած քար ա»։

Ասաւ. «Եաւաշ քաշեմ իմ ձինը էս քարերի վրէն, գետինը հանդարտի, որ էթամ ջարդեմ»։

Ասսու հրամանքով կեռպած քարը էկաւ վրէն զապ (աման) հէլաւ կայնաւ։

Զանք հիմի էլ կայնուկ ա, յիրա մարմնի մազը հէլէ յիրան ծածկեր ա, օխտը կանգուն դոշի լէնքն ա, սուրը Ցարութենի

օրը, բարի լուսի խետ դուս ա գալըմ հէրից, ազօթում ա, օխտը շէնք գաղնում ա յիր տեղից։ Զինը քաշում ա դուս, ձիու ոտնե-ըի տակը գետինը տայանմիշ չիկնում ա, էն վախտը որ յիրեք սըհաթը թմբմում ա, գալում ա նես, հրաման չունի յէվելի մնայ. էն վախտ հէրի դուռը փակում ա. յիրան ուտվածքը օրա-կան յիրեք նշխարք ա, էրկու կուշտը մէկ մէկ մոմ վառուկ ա, գիշեր, ցերեկ։ Զինը շուռ ա, հէրից դուս ա գալըմ ա։ Ձիան եօնջէն յառէջն ա, ամառ ձմեռ կանանչ ա։

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ИЧНСКАЯ БИБЛИОТЕКА
7/XI-1902
ИМЕНИ А. МАСИ И НА
Ա. ՄԱՍԻ ԱՆՎԱՆ

Ն. ԼԱԼԱՑԵԱՆԻ

1. Զաւախքի բուրմունք		25 կ.
2. Զաւախք	1 ր.	— »
3. Վարանդա	1	— »
4. Սիսիան.		80 »
5. Զանգեզուր		50 »
6. Գանձակի գաւառ. Ա. և Բ. հատոր.	1 ր.	60 »
7. Բուլանըխ (Նիւթը հաւաքել է Բէնսէն).	1 ր.	50 »
8. Մոլլա-Նասր-էդ-դին		25 »
9. Հորոս.		5 »
10. ՍԱՍՄԱՑ ԾՌԵՐ		25 »

ՄԱՄՈՒԻ ՏԱԿ

11. Բորչալուի գաւառ
12. Նախիջևանի գաւառ
13. Շարուր—Դարալագեազի գաւառ
14. Նոր Բայազէտի գաւառ

ՀՀ Ազգային գրադարան
NL0349168

33184